№ 138 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 28

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 28 № 138

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ամէն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի: յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

առաջին դասարանը փակված է առաջիկայ տարվանից. աշակերտների ընդունելութիւն չէ լինելու նաև միւս դասարաններում, որովհետև աշակերտների թիւը, համեմատած ճեմարանի շինութեան պայմաններին, շատ մեծ է:

Նոյն ճեմարանի համար հարկաւոր են երեք վերակացու, ռուսերէն լաւ իմացող. կը ստանան դասեր համեմատ դասագնի և 600 ռուբլի ռոճիկ, և երեք ուսուցիչ՝ բնագիտական առարկաների, ընդհանուր և ռուսաց գրականութեան (լսարաններում) և ռուսաց լեզուի (բարձր դասարաններում) համար: Դասագինն է 100 ր. լսարան. 75 ր. 3—6 դասարան. և 50 ր. 2, 3 դասարաններում:

Ցանկացողները թող դիմեն ինձ՝ Эссентуки. Տեսուչ ճեմարանի՝ Մեսրոպ վարդապետ:

(չ.կ.) առ. 1—4

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՈՒՐՃ“

ամսագրի բաժանորդագրութիւնը:

Բաժանորդագինը տարեկան 10 ռուբ.: Ծխական դպրոցների ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների, արհեստաւորների և բանւորների համար 8 ռուբլի: Ամսավճարով բաժանորդագինն է 85 կոպէկ: Բաժանորդագրութիւնը Թիֆլիսում բացի խմբագրութիւնից (Ծովճավաձեան փող., տ. № 12) ընդունվում է նաև «Գուտտենբերգ» գրախանութում (Երևանեան հրապարակ): Դրսից դիմել՝ Тифлисъ «Мурчъ».

«ՄՈՒՐՃ»-ի յուլիսի համարը (1906 թ. № 7) լոյս է տեսնելու յուլիսի 1-ին և չի ուղարկվելու այն բաժանորդներին, որոնք չեն լրացրել այս տարվայ բաժանորդավճարը:

(առ.) 2—5

Բագւում սկսել է լոյս տեսնել հայերէն և թուրքերէն լեզուներով

„ԿՈՉ-ԴԷՎԷՏ“

լրագիրը, որ բացառապէս նուիրված է հայ-թուրքական ընդհարումներին՝ նպատակ դնելով վերջ տալ ցաւալի եղբայրասպանութիւններին. սրանով կոչ է անում այն բոլոր անձերին, որոնց համար թանգ և նուիրական է այդ նպատակը, շտապեն թէ բաժանորդ գրվելով և թէ նիւթական նպաստներով աջակցել նրան և կարելիին չափ շատ տարածել թերթը իրանց շրջաններում:

Լրագրի հասցէն է: Баку. Редакція газеты «Кочъ-Дэветъ», у. Барятинской и Милютинской, д. Султановой.

առ. (չ.զ.) 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաշկանդված վիճակ. Թիւրքահայերի դատը. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Անառիկ գիւղը. Տեղեկատու Զանգեզուրի. Շարժումներ. Մատենագրութիւն. Ուսուցչական համաժողովը. Ճանապարհ բացէք մինիստրութեան նոր աշխատակիցների առաջ. Պետական Դումայի շրջաններից. Մրցում և ոչ բօյկօտ. Կուռ թէ մարդագործութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նապօլիա և իսլամ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԱՇԿԱՆԴՎԱԾ ՎԻՃԱԿ

I

Զափազանց ծանր է մեր գաւառական կեանքի տրամադրութիւնը:

Հայ-թուրքական լարված յարաբերութիւնները ոչ միայն տնտեսապէս քայքայել են գիւղացուն և ֆիզիքապէս նրբան մաշել, այլ և ստեղծել են մի բարոյական անվերջ տանջանք:

—Կարելի է դիմանալ օրեր, շաբաթներ, բայց ստիպված լինել ամիսներ և տարիներ մշտական անհանգստութեան, մշտական յուզմունքի կամ երկիւղի մէջ մնալ—դա անտանելի է:

Գաւառացին շատ դառնագին կերպով գանգատվում է իր դրութեան մասին և նրա խօսքերի մէջ դուք նկատում էք մերթ բուռն զայրոյթի և ցասման, մերթ յուսահատ մտածմունքների սրտաճմլիկ գծեր:

—Շատ երկարեց, բացականչում է նա, դիմանալ անկարելի է:

Արդարև չափազանց երկար է տևում ներկայ տանջալի դրութիւնը:

II

Եթէ մեր ժողովուրդը առհասարակ սիրել է կուլտուրական կեանքը, այժմ նա աւելի ևս մեծ ծարաւ է զգում նուիրվելու քաղաքակրթական գործունէութեան:

Սակայն նրա թևերը ամէն օր կտրատվում են, նրա թռիչքները ամէն օր արգելվում են, նրա գործունէութիւնը հանդիպում է մահաբեր պատնէշների:

Այժմ, երբ ազատագրական շարժումը կարելի է դարձնում շատ հասարակական ծրագիրների իրականացումը, ամէն մի նոր խոչընդոտ և կաշկանդանք առաջացնում են չափազանց մեծ զայրոյթ մարդկանց մէջ:

Իսկ երբ խոչընդոտները այնպիսի սոսկալի և դժոխային բնաւորութիւն ունեն, ինչպէս են հայ-թուրքական ընդհարումները, այն ժամանակ ազգաբնակութիւնը սկսում է կամ կատաղութեան և կամ յուսահատութեան մէջ ընկնել:

III

—Դպրոցներ պէտք է բանալ և կարելիին չափ մեծ թւով:

Ահա ինչ էր ասում ժողովուրդը անցեալ տարի, երբ կառավարութիւնը վերադարձրեց բոլոր դպրոցները և վերացրեց եղած արգելքները:

Եւ հարցեր ծագեցին դպրոցական գործի ընդարձակ կազմակերպութեան մասին:

—Պէտք է աշխղեցնել պարտադիր տարրական ուսման ծրագիրը մեզանում, ասում էին շատերը:

Եւ հասարակութիւնը պատրաստ էր լսելու կարծիքներ այդ հարցի մասին, մշակել ծրագիրներ և կարելիին չափ իրագործել նրանց:

Շատ կը գործէր, թէ ոչ՝ այդ չը գիտենք, արդեօք ընդարձակ կը լինէր գործելու, ծրագիրը այդ անյայտ է: Բայց նա անկարող եղաւ նոյնիսկ փոքրը իրագործելու: Իսկ տարին անցաւ:

Եւ ահա մեր առաջն է միւս տարին դարձեալ շատ սահմանափակ ծրագրով:

IV

Դպրոցը միայն մի մասն է մեծ կուլտուրական գործի և մենք նրան յիշատակեցինք իբրև մի խոշոր օրինակ:

Այն խնդիրները, որոնք դրված են պետութեան առաջ և նպատակ ունեն վերանորոգել կեանքը հիմնաւորապէս, այն գործերը, որոնք յաւակապէս վերաբերում են անդրկովկասեան երկրին, այն մի շարք հարցերը, որոնք առանձնապէս հետաքրքրում են մեզ հայերիս և որոնց մի մասը պէտք է քննվի կենտրոնական համագումարներում—այդ բոլորը պահանջում է մի այնպիսի բարոյական մթնոլորտ, որտեղ հայ-թուրքական ընդհարումների նման արհաւիրքներ չը մթնացնէին և չը սևացնէին մեր կուլտուրական կեանքի օրերը:

Ե՞րբ պէտք է հայ-թուրքական ընդհարումների ժանտախտը դադարէ թունաւորել մեր կեանքը:

Ա. Քալանթար

ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

II

Մենք ասացինք, որ Օրմանեան պատրիարքի և Սահակ Կաթողիկոսի հրաժարականները նորից իրանց վրա պէտք է սևեռեն մեր ուշադրութիւնը օսմանեան հայերի աղէտալի վիճակի վրա:

Ի՞նչ ելք պէտք է գտնել, ի՞նչ միջոց պէտք է որոնել վերջապէս մի փոքր ամոքելու օսմանեան բազմատանջ հայերի ցաւերը և ստեղծելու նրանց համար փոքր ի շատէ մարդավայել կեանք:

Մենք լսեցինք դօքտօր Րայնօլդսի կարծիքը. նա առ այժմ միակ միջոցը՝ գտնում է կրթութեան և եւրոպական կուլտուրայի տարածման մէջ Փոքր-Ասիայում: Նա գտնում է, որ եթէ Գերմանիան կամենում է իրօք մի բան անել Փոքր-Ասիայում, նա այդ կարող է անել միայն հայերի միջոցով, որոնք միայն ընդունակ են յարատև աշխատութեան: Ոչ քիւրդերը, ոչ թիւրքերը չեն շինի կամուրջներ և տօններներ, բայց հայերը այդ կանեն: Այդ պատճառով էլ նա մի մեծ յոյս է տածում, եթէ Բաղդադի երկաթուղու ծրագիրը լուրջ կերպով իրագործվի, նա կարող է փրկել հայերին:

Այս յոյսը, ի հարկէ, ենթադրական է. սակայն, ինչպէս շատ ճիշդ նկատում է պ. Քիյառ, եւրոպական ամէն մի թափանցումն Փոքր-Ասիայի մէջ կարող է միայն նպաստաւոր լինել կայսրութեան ազգաբնակութեան համար: Եւ այդ շատ պարզ է. որևէ մի պետութիւն, որ կամենայ գործ սկսել Փոքր-Ասիայում, պէտք է ամենից առաջ կեանքի տանելի պայմաններ ստեղծել: Եւ մի անգամ, որ Թիւրքիայում կեանքի տանելի պայմանները ստեղծվեցին, հայերը արդէն կարող են յուսալ, որ իրանց վիճակը կը բարւոքվի և նրանց տնտեսական ու կրթական վիճակը արագաբար կը զարգանայ:

Սակայն յոյս դնել Գերմանիայի և եւրոպական թափանցման վրա դժուար է, մանաւանդ որքան ժամանակ գերմանական արտաքին քաղաքականութեան ղեկը կը գտնվի սուլթանասէր Վիլհելմ II քայզէրի ձեռքում:

Աւելի բնական և նպատակայարմար է այն միջոցը, որ բղխում է Քիյառի արտայայտած կարծիքից: Այդ միջոցը թուրք և հայ ժողովուրդների համերաշխութեան և համագործակցութեան ակտն է:

Դժգոհութիւնը սուլթան Աբդուլ-Համիդի բռնակալական ռէժիմի հետ այժմ ընդհանուր է. օսմանեան ժողովրդի զանազան խաւերը արդէն սկսել են արթնանալ, զգալ, գիտակցել, որ այդ ռէժիմը տանում է օսմանեան ամբողջ կայսրութիւնը դէպի կործանումն և քայքայումն: Գուցէ հեռու չէ այն ապագան, երբ մի ընդհանուր բռնկումն կլսկվի Թիւրքիայում Աբդուլ-Համիդի դէմ: Հայերը իբրև ամենից յեղափոխականացած տարր, պէտք է աշխատեն միանալ թուրք դժգոհ տարրերի հետ և միահամուռ ոյժերով աշխատեն ամբողջ երկրի մէջ ընդհանուր ռէֆօրմներ մտցնել: Մի անգամ, որ կը վերակազմվի ամբողջ երկրի դրութիւնը, հայոց հարցն ևս իր շուտափոյթ և արդար լուծումն կը ստանայ:

Պէտք է իմանալ, որ օսմանեան ընդդիմադիր կուսակցութիւնը, որ յայտնի է «Երիտասարդ Թիւրքիա» անունով, շարունակ մեղադրել է հայերին, որ նրանք իբր թէ սեպարատիստ ձգտումներ ունեն, կամենում են ռէֆօրմներ ձեռք բերել միայն հայերի համար, մինչ ռէֆօրմներ հարկաւոր են ամբողջ երկրի համար: Այդպիսի կարծիք հայերի մասին ունենալու առիթ է տուել երիտասարդ թիւրքերին այն հանգամանքը, որ հայերը, հիմնվելով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի վրա, շարունակ դիմել են և հայցել եւրոպական պետութիւնների ու ազգերի օգնութիւնը՝ միայն հայերի համար:

Ի հարկէ, այդ կարծիքը սխալ է. հայերը քանիցս յայտարարել են, որ սեպարատիստ ձգտումներ ամենևին չունեն, որ նրանք յենվել են Բերլինի դաշնագրի վրա միայն նրա համար, որ այդ դաշնագիրը նրանց իրաւագիտական իրաւունք է տալիս ռէֆօրմների պահանջ դնել և ստանալ:

Սակայն, որովհետև այդպիսի նախապաշարումն կայ հայերի վերաբերմամբ օսմանեան գործողների և յեղափոխականների մէջ, պէտք է աշխատել բոլորովին փարատել այդ նախապաշարումը, իսկ դա կը լինի այն ժամանակ, երբ հայերը միացնեն իրանց ջանքերը թիւրք յեղափոխական և ազատագրական շարժման ղեկավար գործիչների ջանքերին և աշխատեն ամենից առաջ իրագործել երկրի ընդհանուր ազատագրութիւնը: Միւս կողմից էլ երիտասարդ թիւրքերը և բարենորոգիչները պէտք է դրական կերպով ընդունեն Բերլինի դաշնագիրը և համոզվեն միանգամայն ընդմիշտ, որ [illegible], թէ 1895 թւի մայիսեան յիշատակագրով պահանջված եւրոպական կօնտրոլը ամենևին ոչ մի հարուած չէ կարող հասցնել օսմանեան կայսրութեան ամբողջութեան, այլ այդ կօնտրոլը անհրաժեշտ է ընդհանուր ռէֆօրմների իրագործման համար:

Ժամանակ է, որ օսմանեան կայսրութեան տարբեր ազգերի մէջ համերաշխութիւն և համաձայնութիւն հաստատելու ջանքեր լինեն ու բոլոր ազգերը և ցեղերը միահամուռ ոյժերով աշխատեն երկրի ընդհանուր ազատագրութեան համար ու միատեղ թօթափեն Աբդուլ-Համիդի բռնակալական լուծը և ապա ամէն մի ազգ ստանայ իր ներքին ինքնավարական կազմութիւնը:

Եթէ օսմանեան կայսրութեան մէջ կը մտցվեն ընդհանուր ռէֆօրմներ, դրանով լուծված կը լինեն Բերլինի դաշնագրի և 23-րդ և 61-րդ յօդուածները, այն է մակեդօնական և հայկական հարցերը, որովհետև այդ յօդուածների միակ նպատակն է կարգ, անդորրութիւն, կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն ստեղծել հայերի և մակեդօնացիների համար:

Ուրեմն, համաձայնութիւն և համերաշխ գործակցութիւն հայ և օսմանեան բարեկարգիչ խաւերի հետ—դա է ներկայումս միակ հնարաւոր միջոցը: Ընդհանուր օսմանեան յեղափոխութիւն—ահա ելքը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Փօրիս, 27 յունիսի

Սպանվեց գաւառի երկրորդ մասի պրիստաւ Բագրատ Ասիլեանը: Նա գնացել էր Խօզնավարի մօտ խմբված և յուզված թուրքերին հանգստացնելու: Իսկ նրա հետ եղած լեզգի ստրաժնիկը անհետացել է:

—

Շուշի, 27 յունիսի

Այստեղ խաղաղութիւնը դեռ չէ վերականգնվել և տեղի ունեն տխուր դէպքեր:

Յունիսի 25-ի առաւօտեան զարուսլուեցի և մուսուլմանլարեցի հեծեալ մի հարիւրեակ քշեց քաղաքի մօտից հայ դաշալթեցիների (Քարին-տակ գիւղացիների) մի հարիւրի չափ տաւարը, սպանեց մի գիւղացու և վիրաւորեց երկուսին:

Նոյնպէս յարձակման ենթարկվեցին փախչողները, որոնցից սպանվեց մէկը և վիրաւորվեցին երկուսը, իսկ նրանց տաւարը տարան աւազակները:

Նոյն գիշերը քաղաքի մահմեդականները փչացրին դաշքենդցիների տասնմէկ բանջարանոցները և կտրատեցին նրանց այգիների ծառերը:

—

Գանձակ, 26 յունիսի

Հաղորդում են, որ Շուշու գաւառում հայերի և կօզակների միջև հրացանաձգութիւն է տեղի ունեցել, որի ժամանակ թեթև վիրաւորվել է ոստիկանութեան պաշտօնեաներից մէկը. վիրաւորվել են 2 կօզակ, որոնցից մէկը՝ ծանր:

Հեռ. Գործ.

—

«Իրշադը» ստացել է Ագդամից, իր մասնաւոր թղթակցից հետևեալ հեռագիրը, յունիսի 25 թւով.

«Երէկ մի հայ խումբ Գիւլափլու գիւղում վիրաւորեց մերձիման երեք կօզակների»:

Ցանկալի էր իմանալ թէ որքան ճիշտ է այս լուրը և եթէ ճիշտ է, ինչ հանգամանքներում է տեղի ունեցել դէպքը:

—

Գանձակ, 26 յունիսի: Զանգեզուրի գաւառում սպանվել է հայ պրիստաւը: Նրա հետ եղող ոստիկանը և լեզգի ստրաժնիկը անյայտացել են: Չարագործներն ազատ են:

Հեռ. Գոր.

ՄԱՄՈՒԼ

—

Անցեալ անգամ մենք առաջ բերինք պ. Ստարցևի կարծիքը Դումայի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի յայտարարութեան մասին: Առհասարակ, այդ դեկլարացիան լաւ տպաւորութիւն չէ թողել Դումայի մեծամասնութեան վրա: Պրօֆեսօր Մակսիմ Կօվալևսկին այդ առիթով գրում է.

«Ի՞նչ դեր են յատկացնում սօցիալ-դեմօկրատները Դումային այդ կռւի մէջ (այն է սահմանադիր ժողով ձեռք բերելու կռւի մէջ): Նրանց կարծիքով, Դուման պէտք է աջակցէ մասսաներին նրանց կազմակերպված արշաւանքներին՝ ազատութեան և իրանց տնտեսական շահերի համար մղվող կռւի մէջ»: Դումայից պահանջում են, որ «նա օգնէ գիւղացիներին կազմակերպել ոյժերը հողի և ազատութեան կռւի համար, որ նա նպաստէ պրօլետարիատին նրա փորձերի մէջ՝ դուրս գալ կազմակերպված կռւի միջոցով» իր ներկայ վիճակից:

«Ուրեմն, ըստ էութեան Պետական Դումային առաջարկվում է դառնալ մի տեսակ կենտրոնական համառուսական գործադուլային կամ յեղափոխական կօմիտէ, որը միութեան և սիստեմի վերածէր ժողովրդական շարժումը՝ սահմանադիր ժողով գումարելու վերջնական նպատակով: Արդէն վերջինը իր վրա կառնէր ծրագրի իրագործումը ըստ էութեան:

«Ինչ ասել կուզի, որ դեկլարացիայի հեղինակների քաղաքական բաղձանքը կայանում է նրանում, որ «ամբողջ պետական իշխանութիւնը» անցնէ ժողովրդի ձեռքը: Թէև այդ ֆրազան շատ անորոշ է դրական բովանդակութեան կողմից, բայց ակնյայտ է, որ նա հէնց արմատից հերքում է Ռուսաստանի վերակազման ցանկալութիւնը իբրև իսկական սահմանադրական միապետութիւն:

«Անկասկած, այդ ծրագիրը համակրութեամբ չի ընդունվի Դումայի մեծամասնութեան կողմից: Դուման չէ կարող հրել երկիրը յեղափոխական կռւի ճանապարհի վրա, այլ, ընդհակառակը, նա ամեն բան պէտք է անէ նրա առաջն առնելու համար:

«Դիմել Պետական Դումային սահմանադիր ժողովի պահանջով և հրաւիրելով դէպի յեղափոխական ղեկավարութիւն այժմ բոլորովին անյուսալի պահանջ է, որովհետև Դուման իրան հաստատ նպատակ է դրել ստեղծել Ռուսաստանում իրաւական պետութեան հաստատ հիմքեր պարլամենտական միապետութեան ձևով: Եւ նա ամեն բան կանէ, ինչ որ իր ոյժերը կը ներեն, որպէս զի հասնէ այդ նպատակին և բանայ Ռուսաստանի համար ազատ զարգացման և լայն բարգաւաճման հնարաւորութիւն և ոչ թէ ստեղծէ մի ապագայ, որ լի է ոստումներով անարխիայի ծայրահեղութիւններից դէպի կամայականութեան ծայրահեղութիւնները»:

*

Վիտտէն, պետական այդ «խոշոր» մարդը, որը մեծ ընդունակութիւն է ցոյց տուել գլխաւորապէս իր մէջքն ու գիտակցութիւնը ծռելու՝ հանգամանքների համեմատ, «Matin» լրագրի թղթակցին արած մի քանի դժգոյն յայտարարութիւնների մէջ արհամարհանքով խօսելով ներկայ Դումայի և նրա անդամների մասին, «մեծ գաղափարներ և փոքրիկ գլուխներ» է կոչել նրանց: Ահա այդ տեմայի ֆրազայի առիթով պ. Մօժան գրում է «Radical» թերթում.

«Մեծ գաղափարներ, փոքրիկ գլուխներ»: Սա կոմս Վիտտէի խօսքն է: Նա ասված է Դումայի անդամների համար, ռուս ժողովրդի բոլոր պատգամաւորների համար, որոնք այնքան համոզմունքով և այնքան անձնուիրութեամբ իրանց ձեռքն են առել նրա դատը: Վիտտէի այդ խօսքը ցոյց է տալիս, թէ ինչպէս բարձր հասարակութիւնը, ինչպէս ռուս կառավարական աշխարհը տառապում են այն համակրութեան և հիացման համար, որ առաջ է բերում Դումայի վարմունքը բոլոր ազատ կամ ազատ լինելու տրամադիր երկիրներում:

Դա վտանգված արիստօկրատիաների և աբսօլիւտիզմի սովորական տակտիկան է. նրանք ուրանում են խելքը և յաճախ բարոյականութիւնը այն արի անձանց, որոնք յանկարծ վեր են կենում պահանջելու կամ պաշտպանելու ազատութիւնը, հաւասարութիւնը, բանականութիւնն ու արդարութիւնը»:

Աւելացնենք մենք, մանաւանդ յետոյ արիստօկրատ դարձած, parvenu կոմսերի տակտիկան:

*

Այն լուրերի առիթով, որ իբր թէ ռուս կառավարութիւնը աշխատում է նոր փոխառութիւն կնքել Վիտտէի և Դուրնօվօյի օգնութեամբ, Ժօրէս իր օրգանում զգուշացնում է մի առաջնորդող, որից առաջ ենք բերում հետևեալ տողերը.

«Եթէ Ցարի ագենտները անկարող լինէին այլ ևս փոխառութիւն կնքելու, ոչ թէ Ռուսաստանի վարկը կը խորտակվէր, այլ հարստահարող և մխող ցարիզմը: Եւ դա կը լինէր միանգամայն նպաստաւոր և՛ ֆրանսիացիների, և՛ հէնց իրան Ռուսաստանի համար: Ռուս ժողովուրդը՝ իր ազատագրական պահանջների մէջ չէր բաղխվի դիմադրութեան և ճնշման այն ահարկու միջոցին, որով գինում է Արևմուտքի ոսկին Ցարի բռնակալութիւնը: Եւ վաղանցիկ փորձանքներից յետոյ, սահմանադրական մի կարգի, վիճաբանութեան և վերահսկողութեան մի ռէժիմի թագաւորումը ռուսական արժէթղթերը կրոդնեբին կը տար աւելի հաստատուն երաշխիքներ, քան այն ապահովութիւնը, որ կարող է նրանց նուիրել մի մահամերձ ռէժիմ, որ սպառում է ազգի հաւատարմութիւնը ազգի դէմ կռւելով: Ռուս բիւրօկրատիայի և միապետութեան՝ մեր վարկային հաստատութիւններին կողմից կատարված նոր զիջումը—փոխառութիւնը—մի ոճիր կը լինէր որչափ ֆրանսիացի պարտատէրների, նոյնչափ Ռուսաստանի ազատութեան դէմ: Այն նոր և զարհուրելի լոյսից յետոյ, որ Բելօստոկի դէպքերն ու իշխան Ուրուսովի յայտնութիւնները նետեցին բիւրօկրատիայի սրիկայութեան անդունդների վրա, այն ֆրանսիական մինիստրը, որ իր հեղինակութեամբ դարձեալ կը պաշտպանէր մի նոր փոխառութիւն ի նպաստ մարդասպանների, բառացի կերպով արիւնի մէջ կը թաթախէր իր ձեռքերը: Ո՛չ, էլ վերջացաւ, իսպառ վերջացաւ: Ֆրանսիան այլ ևս չի լինի, հակառակ իր շահին ինչպէս և իր պատւին, բռնակալութեան և մորթոտումի փող հայթայթողը»:

*

«Օրվան դիտողութիւններ» վերնագրի տակ պ. Գ. Ստարցևը «Ստրանա» թերթի № 102-ում մի շատ հետաքրքիր յօդուած է նուիրել այն հարցին, թէ ինչպէս ներկայ կառավարութիւնը, իր յուռի քաղաքականութեամբ, գործնականապէս պրօպագանդ ու ագիտացիա է անում ժողովրդի ամէն խաւերի մէջ և նրան օր օրի վրա աւելի ու աւելի դէպի յեղափոխութեան ճանապարհը մղում:

«Պ. պ. սօցիալ-դեմօկրատները չափազանց սխալվում են,—ասում է պ. Ստարցևը,—և իրանց շատ մեծ նշանակութիւն ու դեր են տալիս, երբ ասում են՝ մենք կը ստիպենք ժողովրդին հասկանալ, որ խաղաղ ճանապարհներով նա չէ կարող ազատութեան հասնել:

Նրանք չեն, որ կը ստիպեն ժողովրդին իրանց վերջին հաւատը կորցնել, թէ ազատագրական կռիւը կարող է խաղաղ ելք ունենալ:

Շատ աւելի լաւ և շատ աւելի շուտ այդ բանը կարող է անել հէնց ինքը կառավարութիւնը, իր հին քաղաքականութիւնը շարունակելով... Ոչ մի ամենակրակոտ ու կրքոտ ճառ, ոչ մի թռուցիկ չեն կարող անել այն, ինչ որ անում է կառավարութիւնը... Սօց.-դեմօկրատները խօսքով են պրօպագանդ անում, իսկ կառավարութիւնը գործքով: Եւ խօսքը, ի հարկէ, շատ աւելի թոյլ է հանդիսանում, քան գործքը... Ամենաազդեցիկ, ամենագեղեցիկ, ամենաճշմարիտ խօսքերն էլ, այնուամենայնիւ, միմիայն խօսքեր են: Նրանցով կարելի է ոգևորվել, նրանց կարելի է հաւատալ, բայց նրանք չեն ստեղծում մարդու արիւնը, չեն սպանում կեանքը: Եւ ինչ նշանակութիւն ունեն այդ խօսքերը այնպիսի փաստի առաջ, այնպիսի գործողութեան առաջ, որը թէև լռելեան է, բայց մահացու կերպով սոսկալի է իր ակնյայտնութեամբ:

Պ. պ. սօց.-դեմօկրատները ամենաշատը կարող են ամբիոնից շանթահարել կառավարութիւնը, ժողովրդին կը խօսեն նրա ոճրագործութիւնների մասին, կը համոզեն, որ չը հաւատան նրան... Բայց միմիայն կառավարութիւնը կարող է այդ մեղադրանքները հաստատել, միմիայն նա կարող է փաստերով ու գործնականապէս ցոյց տալ, թէ ինչու համար են ժողովրդային ներկայացուցիչները կոչ անում կռւելու: Եւ եթէ այդ փաստերն ու գործողութիւնները չը լինեն, ոչ մի ճառով չէր կարելի ժողովրդին համոզել, թէ պէտք է հրաժարվել խաղաղ, անարիւն կռւի յոյսերից... Բայց երբ ժողովուրդը ամէն օր, ամէն քայլափոխում տեսնում և զգում է, թէ ինչպէս իրան անգթաբար ծաղրում են, ինչպէս վատաբար խաբում են իրան, երբ ի պատասխան իր խնդիրների, իր աղերսանքների և իր ցանկութիւնների, ժողովուրդը նագայկաների հարուածներ է ստանում, նա այլևս կորցնում է իր հաւատը դէպի «բարձրում» եղողների ազնուութիւնն ու խճմտանքը: Նա այլևս այն գիտակցութեանն է գալիս, որ ոչ թէ խօսքերով ու համոզելով, այլ միմիայն բռնի ոյժով ինքը կարող է այդ քարացած ու ագահ «բարձրներ»-ին ստիպել իր օրինաւոր պահանջները կատարելու:

—Մենք, բանւորներս, հասկացել ենք հիմա, որ միմիայն իր ջղուտ ձեռքերով ժողովուրդը կարող է աւելի լաւ վիճակի հասնել...

Եւ այս խօսքերը ասող բանւոր պատգամաւորը թէ անկեղծ էր և թէ իրաւացի. բանւորներից շատերը, եթէ ոչ բոլորը, այժմ միայն մէկ հաւատ ունեն, այն է՝ հաւատ դէպի իրանց ջղուտ ձեռքերը...

Բայց այս հետևանքին հասել են ոչ թէ սօց.-դեմօկրատները, ոչ թէ նրանց ագիտացիան, ճառերը և բրօշիւրները, այլ կառավարութիւնը, իր սայթաքող, դաժան ու արիւնալի քաղաքականութեամբ:

Եւ այդ գիտակցութիւնը, այդ հաւատը դէպի ջղուտ բռունցքը, իբրև միակ ապաստան կողոպտված, ծեծված, վիրաւորված ժողովրդի, աւելի ու աւելի խորն է մտնում երկրի ծալքերի մէջ...

Ժողովրդային բռունցքը արդէն սեղմվում է. ջղուտ ձեռքը բարձրացած է, պատրաստ հարուածելու, և միայն Դուման է նրան կանգնեցնում... Բայց բաւական է, որ Դուման մի կողմ քաշվի, և բռունցքը կիջնի... Ա՞յդ է արդեօք ուզում կառավարութիւնը

Երևի, այդ է ուզում...

Պատգամաւոր Ժիլկինը մի անգամ ասաց Դումայում.

—Միապետութիւնը կարող է գոյութիւն ունենալ մեզանում, բայց նա դրա համար պէտք է ժողովրդի ցանկութիւններին դիմաւորէ ազնուաբար և անկեղծաբար...

Պատգամաւոր Ժիլկինը մի մեծ ճշմարտութիւն ասաց, որի մասին, ինչպէս երևում է, Պետերհօֆում ոչինչ չը գիտեն... Րօմնիտր Պիչկինները և այն ամենքը, ում թանգ են ոչ միապետութեան ճակատագիրը, ոչ էլ երկրի տառապանքները, ինամքով թագցնում են այդ ճշմարտութիւնը. նրանց համար կարևոր և թանգ է իրանց համար պահպանել հէնց այս օրերը, իսկ յետոյ, իրանցից վերջը թէկուզ խակի խոտ էլ թող չը բուսնի... Դատարկ և ի զուր ինքնախաբէութեան մէջ նրանք մտածում են ամբաձիգներով իրանց պաշտպանել ժողովրդի «ջղուտ ձեռքերից» և չեն տեսնում կոյրերը, որ չը կան այնպիսի ամբաձիգներ, չը կան այնպիսի գործիքներ և վաշտեր, որոնք կարողանային դիմանալ ժողովրդի ընդհանրական բռունցքի հարուածին և չը փշրվէին...

—Ժողովուրդ! քեզ խաբում են!

Եւ եթէ այս աղաղակը կը հասնի ժողովրդի սրտին, նրա ուղեղը կրակով կը բռնկվի, և այն ժամանակ ռոտմիստր Պլեշևները չեն, որ պիտի կարողանան փրկել թէ իրանց և թէ միապետութիւնը...»

Կարծես թէ ի հաստատութիւն պ. Ստարցեվի վերոգրեալ յօդուածի և ցոյց տալու համար, թէ ինչպէս կառավարութեան փաստացի և գործնական ագիտացիան արգասաբերութեամբ է հասունացնում Ռուսաստանի յեղափոխութիւնը, հետզհետէ ամուր սեղմելով և զօրեղ ջղուտ բռունցքը, Թերթերը ամեն օր մի շարք տեղեկութիւններ են հաղորդում զինուորների զանազան զունդերի մէջ տեղի ունեցող խլրտումների մէջ:

Թող դեռ ինքնախաբէութեամբ շարունակէ պնդել բիւրոկրատիան, թէ ամեն ինչ խաղաղ ու անդորր է զօրքի մէջ: Շատ իրաւացի է պ. Ստարցեվը. Ջղուտ բռունցքը արդէն բարձրացած է և պատրաստ է հարուածելու, իսկ նրան կանգնեցնողը այլ ևս ոչ թէ ամբաձիգների ու սուինների վախն է, այլ միայն Պետական Դուման, որի համար չափազանց թանգ է ժողովրդի ամեն մի կաթիլ արիւնը և որը դեռ մտածում է, թէ բիւրոկրատիան վերջապէս կարող է խելքի գալ և հէնց նոյն իսկ իրան չը մատնել անդառնալի կորուստի վտանգին...

ԱՆԱՌԻԿ ԳԻՒՂԸ

«Մենք ձեզանից օգնութիւն չենք ուզում, դուք մեզ հաց հասցրէք, մենք մեզ կը պաշտպանենք»:

Որքա՜ն աւիւն այս ինքնավստահ, պահանջկոտ խօսքերի մէջ:

Դա ղարաղշլաղեցու նամակն է խօսում, այն՝ որ խմբված է պատերազմի, արեան դաշտից, հազարաւոր Թուրքերով պաշարված և գնդակների տարափներով խլացող այդ մի բուռն հայ քաջերի հայրենիքից, և ուղղած Շուշում ապրող ղարաղշլաղցիներին:

Մի շղթայական օղակ կամ մի անձև ցանց՝ հիւսված անհաւասար լեռնագագաթներից ու նրանց փեշերից, որոնց կրծքի վրա աջ ու ձախ, յետ ու առաջ 10—15 գիւղակներ փռված են 10—15 վերստ տարածութեան վրա, մէկը միւսից կէս կամ մի վերստ հեռու: Դիրքը, տեղը և բնութիւնն ինքն է այդպէս բաժանել իրարուց, կտոր-կտոր արել այդ գիւղը. իսկ դրութիւնը և ժամանակը սահմանադրել են նրանից մի անվախ, քաջարի տարր, բոլորովին ոչ նման միւս գիւղացիներին, աւելի կոշտ, հպարտ, անտաշ իրանց առանձնայատուկ բնութեամբ:

Ուրիշ կերպ էլ չէին կարող լինել...:

Աշխարհագրական պայմաններն այնպէս են դասաւորված ղարաղշլաղեցու համար, որ նա պէտք է կամ ապառաժին ապառաժով պատասխանէ և սրին սրով, որ կարողանայ մեկուսացած վայրում իր գլուխը պահել, կամ պէտք է ընկճվի, թուլանայ և իր շրջապատող մեծ ոյժին՝ Թուրք ու քիւրդ տարրին ստրուկը, զոհը դառնայ:

Ահա այդ ամուր շղթան են ուզում ճեղքել Թուրքերը և իրանց համար անցք բանալ դէպի Շուշի: Դա է միակ արգելքը, որ չէ թողնում Թուրքերին իրանց ձեռքն առնել նաև քաղաքի «Երևանեան» կոչվող մուտքը:

Օգոստոսի արիւնոտ օրերից յետոյ այս գիւղը երեք չորս անգամ ենթարկվեց բազմահազար խուժանի յարձակման և ամեն անգամ յամառ դիմադրութիւն ու ինքնապաշտպանութիւն ցոյց տալով՝ յետ մղեց կատաղի յարձակումը: Ամեն մի նոր յարձակվող ոյժ աւելացնում էր իր վրա կուտող խուժանի և զինեալների համեմատաբար ստուար թիւ, որ փորձէ ու տեսնէ թէ՝ բազմութեան առաջ ինչ պիտի անէ գիւղը, բայց և ամեն անգամ աւելի եռանդով, աւելի սրտով էր նա կռւում, կոտորում ու յետ փախցնում թշնամուն, պաշտպանելով այն սկզբունք դարձած առածը թէ՝ «տորը ինչքան խիտ լինի, այնքան լաւ կը հնձվի»:

Վերջին փորձը նրանք արին ամսիս սկզբներին և կամեցան վերջին ձիգը թափել ու պատժել ղարաղշլաղցոց յամառութիւնը, բայց յետ մղվեցան՝ դարձեալ կորուստներով: Այդ յարձակման հրացանաձգութեան ձայնին պատեհութիւն է ունենում լսող ու տեսնող լինելու կօզակների սպայ Գոնեպսօկին, որ Գորիսից վերադառնալով անցնում էր գիւղի կողքով, և լուր է բերում Շուշի գեն. Գոլոշչապովին: Նա աւելացնում է, որ կամենում էր իր հետ ունեցած 7 կօզակով պաշտպանել գիւղը և յետ դարձնել Թուրքերին, բայց երկիւղ կրեց կօզակներին զոհ տալուց, որովհետև ոյժը քիչ էր խուժանի դիմաց...: Շատ բնորոշ էր գեներալի պատասխանը...—Խելօք ես վարվել, թէ չէ ձեզ կը կոտորէին Թուրքերը:

Երեք օր պաշարված մնալով գիւղը՝ շատ ուշ օգնութիւն ստացաւ... կառավարութիւնից: Տեսնելու բան էր, թէ ինչպէս գեներալի հրամայած վաշտը անվրդով ու հանդարտ կերպով, վերին աստիճանի զգուշաւորութեամբ էր շարժվում տեղից և պատրաստվում Ղարաղշլաղին օգնութեան գնալու: Երեք ժամվայ ճանապարհը երեք օր դարձաւ և չորրորդ օրը գնացած կօզակները յետ դարձան կրնկան վրա և լուր բերին, որ գիւղի մօտ այլ ևս Թուրք չը կայ:

Մենք ենք միամիտ, թէ իրանք...:

Թուրքերը քաշվել, անտառներն էին մտել և այդտեղից աւազակային խմբերով ճանապարհների, հանդերի նշանաւոր անցքերը կտրել: Վերջին փորձի անյաջողութիւնը նրանց կրկին մարդասպանութեան փեշակին վերադարձրեց: Այդպէս էր ողջ տարին նրանց ամեն մի յարձակման վերջը: Այդպէս եղաւ և այս անգամ: —Ճանապարհով խումբ խումբ դէպի քաղաք եկող գիւղացիներին զարանամուտ եղան, չորս կողմը կտրեցին, մի երկուսին գնդակահար արին և տասներեքին տարան...: Դրանցից առաջամուտ մի քանի հոգի ճանաչեցին աւազակախմբի մէջ իրանց հարևան Խալֆալու և Ջաղալու գիւղացիներից մի քանիսին և քաղաք գալով՝ գիւղացիներին յայտնեցին:

—Կարո՞ղ ես պատժախմբի հետ գնալ այդ գիւղերը և ցոյց տալ նրան Թուրքերին,—հարցրեց գեներալը:

—Այո, կարող եմ:

Մի քանի օրից յետոյ պատժախումբը սովորական դանդաղկոտութեամբ անցաւ Խալֆալու և Ջաղալու: Թուրքերը ցիրուցան եղան իրանց հարիւրաւոր որջերում. մարդ չէր ճարվում տներում, կարծես մի քանի տարվան աւերակներ էին ներկայացնում գեղանիստ այդ տները: Վերջապէս մի տեղ պէտք է նրանք երևան գային, գոնէ պաշտօնական մարդկանց՝ տանուտէրի, դատաւորի պատասխանատու ձեռքով: Եկան...: Սկսվեց խուզարկութիւն, մի փոքր խառնակ հարցուփորձ, պահանջ: Եւ այդ խառնութիւնը ոստիկանութեան և պատժախմբի ձեռքը տուեց անհետացած մարդկանց իրերից ու ապրանքներից մի քանի կտոր, կորած ռուս ստրաժնիկի կրծքի խաչը իր անուան փորագրութեամբ և չորս մարդ, որոնց մատնացոյց էր արել խմբի հետ գնացող ղարաղշլաղեցին: Պահանջվեց ցոյց տալ կորած մարդկանց տեղը: Բռնվածները մտրակի տակ իսկոյն յայտնեցին:—Նրանց երկուսին գլխատել են, իսկ 11 հոգին գտնվում են Հումբաթի ձեռքի տակ, Ջաման-փայտաու գիւղամասում, կենդանի, թէ սպանված՝ անյայտ: Զօրախումբն ուղղվում է դէպի այդ գիւղամասը. դժուարանց սարեր, ձորեր, անտառներ են: Մի ժամ չանցած, ամեն մի բլրի ետևից սկսվում են յանկարծակի համազարկեր դէպի զօրքը: Նրանք մնում են շուար, շփոթ դրութեան մէջ և... ստիպված են լինում յետ դառնալ, բերելով իրանց հետ չորս բռնված Թուրք, մի քանի կտոր իր և խաչը...:

Կատարվում են սովորական ձեւականութիւններ. բանտ, քննութիւն...:

Ձեւականութիւններ, որոնք շատ հեշտ են միջոց տալիս աւազակին բանտից ազատվելու:

Եւ ազատվում են...:

Իսկ կրծքի խաչերն ու հայկական գորգ ու կապերտները մնում են անզօր բողոքների ճնշված ուրուականներ բիւրոկրատիկ կառավարութեան դիւաններում...:

Տ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գորիս, յունիսի 21-ին

Քաղաքներից ստացված լարված դրութեան և անախորժ դէպքերի լուրերը մեծ ազդեցութիւն են թողնում մեզ վրա: Դրսից եկած լուրերին էլ միանալով մեր գաւառի խորշերում Թուրքերի ձեռքով կատարվող գործողութիւնները, մեր կարիքաւոր կեանքին դժոխային տեսք, քաոսային կերպարանք են տալիս:

«Ամսիս 19-ին Գորիսի կառավարչական գրասենում ստացվեց Սարուղի պօստի ռուս ստրաժնիկ պահակապետի ձեռքով գրված մի ռապօրտ հետևեալ բովանդակութեամբ:

Ամսիս 18-ին, ժամի 3-ին Սարուղ կայարանը թափվեցին երեքգծեան հրացանով զինված 25 հոգուց բաղկացած մի խումբ Թուրք ձիաւորներ: Նրանք մեր ներկայութիւնը ոչինչ համարելով, իրանց պրոպագանդը առաջ էին տանում աներկիւղ և խրախուսում էին Թուրք գիւղացիներին զէնք և զինամթերք գնելու: Այսօր (19-ին) առաւօտեան էլ մի նոր խումբ, 35 ձիաւորներից բաղկացած և զինված երեքգծեան հրացաններով, մի յայտնի խանի հրամանատարութեամբ եկաւ նոյն կողմից:

Սրանք բերել էին Թուրքական գիւղերում ցրելու համար մի բեռ հրացաններ և մի քանի բեռ փամփուշտ: Նախ գիւղերում ցուցակներ են կազմել և փող են հաւաքում ստիպմամբ, իսկ բերած զէնքերը զոռով առնել են տալիս:

Եկած երկու խմբերը պատմում են, որ այս երկու օրերը Սարուղի ձորերը կը գան 300—400 ձիաւորներ: Ուստի պարտք եմ համարում դիմել ձեր բարեհաճ կարգադրութեան, Թուրքերի այդ արարքը խափանելու համար:

Դրութիւնը շատ պարզ է և դէպքը հազարներից մէկն է, սակայն ռուս ստրաժնիկը անլուր չէ թողել: Երևում է, որ Թուրքերը մտադիր են կենտրոնանալ Սարուղի ձորակում, և մեծ գրոհով յարձակվել Ղարաղշլաղի վրա, ուր քանիցս անգամ Թուրքերը ամօթալի պարտութիւն են կրել և կամ յարձակվեն Կոռնիձոր, Տեղ, Խնածախ ու Խօզնավարի վրա:»

Ռապօրտը ստանալուց մի օր յետոյ օֆիցէր Էլիօզովը 4 ստրաժնիկի հետ բարեհաճեց դէպի Սարուղ գնալ: Զօրք չուղարկվեց. գաւառապետի բացակայութեան, թէ՞ ըստ պօլիցիական փտած սովորութեան. այդ իրանց գործն է:

Գորիսից Շուշի յարաբերութիւնը համարեա թէ կտրված է: Գաւառապետ պ. Միտկևիչ, դիտելով մեր գաւառի հայերի և Թուրքերի յարաբերութիւնը, հեռագրեց գեներալ Գոլոշչապովին, որ գաւառում երկու ժողովրդի մէջ դէպի խաղաղութիւն ունեցած հաւատը մեռած է:

Ամսիս 18-ին Սիսիանի Շամբ Թուրք գիւղում վերաբնակվող մի քանի ղարաբաղցի Թուրքեր յարձակվում են Աշխեցոց տաւարածների վրա և 4 տաւար քշում: Հաւար է ընկնում, գիւղի երիտասարդները օգնութեան են հասնում, յետ խլում տաւարը, իսկ Թուրքերին խաղում դէպի Շամբ:

Նորերս մի քանի հայ գիւղացիք հազիւ ազատվեցան սպանվելուց: Հացի խնդիրը դէպի Նախիջևն գրաւցի Թուրքն է մղում խեղճ հային, իսկ նրանք հետամուտ են լինում նրան սպանելու: Հացի պակասութիւնը մեծ է և եկող աշնան սով է սպառնում մեզ: Արդէն Խնածախում մի ամբողջ ընտանիք քանի օր է կանաչով են ապրում:

Մեզնից ցած Թուրքական գիւղերում շատ Թուրք Թարաքեամաներ են հաւաքված, որոնք մօտ ապագայում սպառնացող ընդհարման համար չեն ուզում սար բարձրանալ, ուր նրանց դրութիւնը ծանր կարող է լինել իրանց կարծիքով: Քոչի 1/4 մասը դեռ մնում է խմբված. Նրանք ծախում են կով, եզ, ձի ու ոչխար և զինվում են անընդհատ: Իսկ հայը: Ի՞նչ է մտածում.—կառավարութիւնը մեռած չէ, լաւ կը լինենք: Ահա մի անշրջահայեաց և անտարբեր ժողովրդի մտածմունքը: Մի շարք դառն ճշմարտութիւններից մենք օգտվել չը գիտենք մինչև օրս:

Ցոյց դիր «շլափաւորին», ինչպէս դու ես անուանում կառավարութեան, դժբաղդ զանգէզուրցի, և խաղաղ կեանք երազիր: Օրերը շատ, երազդ անծայր և ցաւերդ անպակաս. Ինչ կը լինի քո վերջը:

Սազանդարեան

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Զինուորական մինիստրութիւնը մինչև վերջին ժամանակներս էլ անուշադիր էր թողնում լրագրների տուած տեղեկութիւնները և լուրերը «զինուորների զինուորական միութեան» գոյութեան մասին: Այժմ Վիլնայում 3-րդ զօրաբանակի շտաբի վարչութեան զինուորների մօտ խուզարկութիւն կատարելով, գտել են «զինուորական միութեան» կնիքը: Զինուորական մինիստրութեան կարգադրութեամբ բոլոր զօրամասերում ներկայումս խիստ քննութիւն է սկսված զինուորների առնչութիւնը «զինուորական միութեան» հետ պարզելու համար: «Нов. Вр.»

—Պօլտավայից «Страна»-ին հեռագրում են. «Քաղաքապահ զօրքերի մէջ սև հարիւրեակային եռանդուն ագիտացիա է սկսված: Ռուսաց ժողովի հռչակաւոր անդամ Կիսէլևօվը ներկայացրել է Սէվսկի գնդին «Սև հարիւրեակները և կարմիր հարիւրեակները» վերնագրով գրքոյկից 1,000 օրինակ: Ագիտացիան մղվում է ընդարձակ չափերով: Ելեցկի գնդի զինուորների մէջ այն համոզմունքն է կազմվում, որ Ջարդին մասնակցելը մոռացնել կը տայ իրանց յանցանքը: 9-րդ դիվիզիայի շտաբը ուղարկել է «Ռուսաց բանուորների մտերմութիւն» կոչը: Վաշտի գլխաւոր օֆիցէրը այդ կոչի առթիւ զրուցում է զինուորների հետ:

—Յունիսի 20-ին, ցերեկվայ ժամի 5-ին պետական թղթերի պատրաստութեան էքսպեդիցիայում մեքենայական մասի բանուորները անհամբեր բազմութեամբ, աշխատանքները վերջացնելուց յետոյ, դուրս եկան երգելով և կարմիր դրօշակներով Բիժակի պրօսպեկտ: Մարսելիէզի ձայները գրաւեցին անցուդարձ անող հասարակութեան ուշադրութիւնը և էքսպեդիցիայի դարպասների առաջ ահագին բազմութիւն հաւաքվեց: Կարճ ժամանակից յետոյ այնտեղ եկաւ ոստիկանական հեծելախումբ 30—40 հոգուց բաղկացած, պրիստաւի առաջնորդութեամբ: Երբ բանուորները դուրս եկան դարպասներից, «Петерб. Лис.» ասելով, պրիստաւը յարձակվեց դրօշակակրի վրա, դրօշակը խլելու դիտաւորութեամբ: Բանուորներն էլ իրանց կողմից յարձակվեցին պրիստաւի վրա ու ջարդելով արիւնլուայ արին: Գօրոդօվօյները սկսեցին պաշտպանել իրանց գլխաւորին: Ընդհարում տեղի ունեցաւ: Երկու կողմից էլ վիրաւորներ եղան: Պրիստաւը վիրաւորված է գլխից ու դէմքից:

—Ցարսկոյէ Սէլօյում բանակ դրած լէյբ-գվարդիայի կիրասիրեան գնդի զինուորների մէջ խլրտումներ են նկատվում, որի պատճառը գնդապետի արած կարգադրութիւնն է, որով զինուորներին արգելվում է լրագիրներ կարդալ:

—«Мысль» լրագիրը հաղորդում է, որ Պետերհօֆում վերջին օրերս զինուորները միտինգ են ունեցել:

Այդ միտինգում խօսել են զօրքերի դրութեան մասին ժողովրդական տրամադրութիւնը ի նկատի առնելով: Կուրսկի անցքերի, Ելեցկի գնդի ապստամբութեան և, մանաւանդ, կօզակների մերժումը Օդեսսայում կրակել բանուորների վրա, այդ լուրերի հաղորդելը մեծ ոգևորութեամբ ընդունվեց: Զինուորները յարգեցին լէյտենանտ Շմիդտի ու նրա հետ ընկած նաւաստիների յիշատակը: Մի քանի զինուոր գիւղացիներ նկարագրելով գիւղացիների անտանելի կեանքը, յիշեցին իրանց սովամահութեան մատնված հայրերին և մայրերին, քոյրերին և եղբայրներին, որոնք մանաւանդ քայքայված են կօզակների արշաւանքներից ու պատժական զօրախմբերից յետոյ: Ի վերջոյ ընդունվեց հետևեալ բանաձևը, որով բողոք է յայտնվում կառավարութեան գործողութիւնների դէմ, զինուորներին ոստիկանական ծառայութեան կանչելու համար, և պատրաստականութիւն յայտնում օգնել ժողովրդին նրա վճռական առաջխաղացութեան րոպէին: Ժողովն անցաւ շատ ջերմ և նրան մասնակցողները ցրվեցին ոգևորված տրամադրութեամբ «դուբինուշկա» երգելով:

—Ագրարական շարժումը օրէցօր սաստկանում է Ռուսաստանի ներքին նահանգներում: Վերջին ժամանակներս յաճախակի կրկնվող կալուածատիրական դաստակերտների հրդեհումների պատճառով կալուածատէրերը վաճառում են իրանց անասունները, ձիաները: Սարատովի և Տամբովի նահանգներում, տեղական լրագիրների ասելով, արդէն վաճառվել են ձիաների 36 գործարաններ: Վերջին ժամանակներս Սարատովի մօտիկ բանակ դրած զօրամասերից շարունակ զօրքեր են ուղարկվում զանազան գաւառներ ագրարական անկարգութիւնների առաջն առնելու համար ապագայում:

—Ներքին գործերի մինիստրութիւնը Պերմի նահանգապետից տեղեկութիւն է ստացել Ուրալի բանուորների յուզված տրամադրութեան մասին: Դեմիդովի, իշ. Սանդօնատօի, կոմս Շուվալովի, կոմս Ստրոգանովի, Եակովլևի ժառանգների և այլն մասնաւոր գործարանների բանուորները յափշտակում են արքունի և մասնատիրական հողերը ու գործ են դնում հերկելու համար: Նահանգապետը վերջացնում է իր զեկուցումը՝ խնդրելով նպաստ յատկացնել գործարաններին արքունի միջոցներից:

—Յունիսի 27-ին Թիֆլիսում վերսկսվեցին աշխատանքները ռուսաց թեմական մոմի գործարանում, որ գտնվում է Ցինեթսկի փողոցի վրա: Բանուորներին բաւարարութիւն է տրված:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. Խալաթեանց՝ «Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ», Թարգմ. Արսէն վարդ. Սիմոնեանց, Վիեննա 1906 թ.

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան լոյս ընծայած այս նոր գրքոյկը Գ. Խալաթեանցի ռուսերէն հետազօտութեան թարգմանութիւնն է:

Երեք տարի սրանից առաջ, 1903 թւին, Գ. Խալաթեանց լոյս ընծայեց մի աշխատութիւն հայ Արշակունիների մասին, որի մէջ խիստ քննադատութեան էր ենթարկել Մովսէս Խորենացուն, իբրև պատմագրի: Այդ աշխատութիւնը իր ժամանակ յարուցեց հետաքրքրութիւն և թեր ու դէմ կարծիքներ:

Սակայն աշխատութեան ռուսերէն լինելը դարձրել էր նրան անմատչելի այն հայերի համար, որոնք անկարող էին ռուսերէն կարդալ:

Ցանկանալով Գ. Խալաթեանցի այդ աշխատութիւնը մատչելի դարձնել բոլոր հայերի համար, Արսէն վարդապետ Սիմոնեանց թարգմանել է այն գլուխները, որոնք վերաբերում են Սանատրուկի և Մաշտոցի գործունէութեան, Արտաշիրի թագաւորութեան և Արշակունեաց գահի անկման, Մեծ-Տրդատի վարքագրութեան և Գահնամակի էութեանը:

Թարգմանութիւնը նախ տպվել է Վիեննայի «Հանդէս Ամսօրեայում» և ապա արտատպվել առանձին գրքոյկով, որ բաղկացած է փոքրադիր 126 երեսից և կազմում է Միաբանութեան հրատարակած «Ազգային Մատենադարանի» 51-րորդ պրակը: Գրքոյկը արժէ 1½ ֆրանկ:

Թարգմանութիւնը կատարված է կովկասահայերի գրական լեզուով:

Անկասկած, ներկայ գրքոյկը լրացնում է հայ պատմական քննադատութեան գրականութիւնը, որ դեռ ևս չէ կարող պարծենալ առանձին հարստութեամբ:

Ա. Ք.

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ժ. Նիստ

Ուսուցչական համաժողովի Ժ. նիստը կայացաւ ամսիս 26-ին, առաւօտեան ժամը 9½-ին, նախագահութեամբ պ. Ի. Յարութիւնեանի:

Նախագահի առաջարկութեամբ կարդացվում է նախորդ նիստի արձանագրութիւնը, որը մի քանի աննշան սրբագրութիւններից յետոյ վաւերացվում և հաստատվում է:

Ապա նախագահը համաժողովին զեկուցանում է այն մասնաժողովի 11 անդամների ընտրութեան արդիւնքի մասին, որը պէտք է մշակէ ռուսահայոց դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների պրոֆեսիոնալ միութեան կանոնադրութեան մանրամասնութիւնները և առաջարկէ համաժողովին հաստատութեան:

Այդ մասնաժողովի անդամներ ընտրվել են հետևեալ անձինք.

Պ. պ. Յ. Մանանդեան 60 ձայն, Սօլօխեան 55, Ս. Շխեան 53, Ա. Աբեղեան 51, Ա. Աթանասեան 51, Երզնկեան 50, Աւետեան 48, Լ. Բաբայեան 48, Ի. Յարութիւնեան 44, տիկին Վարդանեան 40 և Մուրադեան 32:

Նախագահը համաժողովին է առաջարկում մի բողոքագիր, որ ներկայացրել են միևնոյն համաժողովի 36 անդամները, առաջարկելով վերաքննութեան ենթարկելու ուսուցչական համագումարի ամսիս 24-ի նիստում քննված հետևեալ որոշումը. «Միութեան անդամ կարող են դառնալ ա) նրանք, որոնք ուսուցչական պաշտօն են վարում անդամ գրվելու րոպէին և բ) նրանք, որոնք անդամ գրվելու ժամանակ պաշտօն չունեն, ուրիշ խօսքով նրանք, որոնք ուսուցիչ եղել են»:

Այդ բողոքագիրը ստորագրող 36 հոգին գտնելով որ այդ որոշման երկու մասերը բղխում են միմեանցից բոլորովին տարբեր և իրար հակասող սկզբունքներից և երկրորդ համարելով «ուսուցիչ եղել են» բառերի իմաստը չափազանց անորոշ և առաձգական, ուրեմն և բազմաթիւ թիւրիմացութիւնների առիթ տուող մի արտայայտութիւն, հրաւիրում էին համագումարի ուշադրութիւնը այդ հանգամանքների վրա:

Համաժողովը ի նկատի ունենալով և քննութեան ենթարկելով այդ բողոքագիրը, նորից հաստատեց, որ ռուսահայոց դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների պրոֆեսիոնալ միութեան անդամ կարող են լինել միմիայն այն անձինք, որոնք անդամ կոչվելու մոմենտին գտնվում են ուսուցչական պաշտօնում:

Այս նիստում համաժողովի քննութեան նիւթ դարձան նաև պրոֆեսիոնալ միութեան անդամների անդամակցական վճարի և դասագնի խնդիրները:

Անդամակցական վճարի նկատմամբ համաժողովը ձայների մեծամասնութեամբ որոշում է փոխել միութեան նախագծի այն որոշումը, որի համեմատ միութեան քաղաքային ուսուցիչները վճարում են 5, իսկ գիւղական դպրոցների ուսուցիչները 3 րուբլի: Այդ խնդրի վերաբերմամբ համաժողովը ընդունեց միայն անդամակցական տուրքի տոկոսային սիստեմը և վերապահեց յանձնաժողովին որոշել տոկոսի քանակը և պրօգրեսիւ սիստեմը:

Դասագնի որոշման հարցով համաժողովը զբաղվեց մի քանի րոպէ ընդմիջումից յետոյ:

Այդ հարցի մասին ժողովականներից շատերը յայտնեցին իրանց կարծիքները և պատճառաբանութիւնները, որից յետոյ համաժողովը որոշեց թողնել, որ դասագնի minimum-ը որոշէ ամեն անգամ միութեան շրջանային ընդհանուր ժողովը, ի նկատի ունենալով տեղական առանձնայատուկ պայմանները:

Դրանից յետոյ վիճաբանութիւնները շարունակվեցին այն հարցի շուրջը, որ ուսուցչական պրոֆեսիոնալ միութիւնը իր շահերը պաշտպանելու համար պէտք է տնտեսական կռիւ մղէ:

Այդ բանը ի նկատի ունենալով ժողովականներից մի քանիսը հարց բարձրացրին, թէ արդեօք ուսուցչական միութեան իրաւունք է տրվում մանկավարժական խնդիրների համար բոյկօտ անելու:

Այդ հարցի մասին ժողովականների կարծիքները բաւական տարբերվում էին միմեանցից:

Ոմանք յայտնեցին այն կարծիքը, որ ուսուցչական միութիւնը ինչպէս տնտեսական, նոյնպէս և մանկավարժական խնդիրների համար կարող է կռիւ մղել:

Ոմանք էլ հակառակ այս կարծիքի առաջարկում էին, որ ոչ թէ միութիւնը կռիւ մղէ ժողովրդի ներկայացուցիչների դէմ, այլ նոյն իսկ ժողովրդի միջոցով պրոպագանդա անէ իր ցանկացած գաղափարները անցկացնելու համար:

Այդ հարցի աւելի մանրամասն լուսաբանութիւնը թողնվեց հետևեալ նիստին:

Ժողովը փակվեց ժամը մօտ 3-ին:

Լ. Բ.

ՃԱՆԱՊԱՐՀ ԲԱՑԷՔ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ-ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ ԱՌԱՋ

Մինչ Պետական Դուման մօտ երկու ամիս է գլուխ է պատռում ագրարային կնճռոտ հարցի համար մի լուծում գտնելու, Գորեմիկինի մինիստրութիւնը, առանց մի որևէ ուշադրութիւն դարձնելու Դումայի վրա, այդ հարցը իր համար արդէն լուծված է համարում և ամսիս 14-ին մի յատուկ շրջաբերականով այդ մասին մի քանի որոշ կարգադրութիւններ արեց:

Մինիստրութեան այդ վարմունքի ամենամեծ ապօրինութիւնը նախ նրա մէջ է կայանում, որ նա, բոլորովին մոռանալով իր նախորդ մինիստրութեան ձեռքով կազմած «հիմնական» օրէնքները, որի համաձայն մինիստրութիւնը շրջաբերականով օրէնքներ կարող է յայտարարել այն պարագաներում միայն, երբ Պետ. Դուման արձակուրդների կամ մի այլ պատճառով դեռ ևս գումարված չէ: Իսկ Դումայի նիստերի ժամանակ «հիմնական» օրէնքները մինիստրութեանը այդպիսի ոչ մի իրաւունք չեն տալիս: Բացի դրանից՝ նոյն հիմնական օրէնքները թելադրում են, որ մինիստրութեան շրջաբերականով հրատարակած օրէնքները անպատճառ համաձայն ու համապատասխան լինեն Դումայի մեծամասնութեան ձգտումներին ու հայեացքներին:

Ահա, այսպիսի հիմնական օրէնքներ ունենալուց յետոյ,—օրէնքներ, ասում ենք, որ մշակել է հէնց ինքը բիւրոկրատիան, առանց ժողովրդի ներկայացուցիչների մասնակցութեան—ինչ է նշանակում մինիստրութեան վերջին վարմունքը: Պարզապէս այն, որ մինիստրութիւնը Պետական Դումայի գոյութիւնն անգամ չէ ուզում ճանաչել:—Դու ինձ հետ չես հաշվում,—ասում է մինիստրութիւնը Դումային,—իմ հրաժարականն ես ամեն օր պահանջում, դէհ գնա ուրեմն դու քո ճանապարհով, ճառիր, որչափ քէֆդ կը տայ, ես էլ քեզ չեմ ճանաչում, քեզ չեղած կը համարեմ և կը գնամ իմ սովորական հին շրջաբերականների ճանապարհով:

Եւ նա թխում է իր շրջաբերականները, թելադրում է իր ուզած օրէնքները:

Յունիսի 14-ի շրջաբերականով, որի տակ ստորագրել են Ստոլիպին և Ստիշինսկի մինիստրները, յանձնարարվում է ամեն տեղ յատուկ յանձնաժողովներ կազմել, որոնց մէջ կարելի է գիւղացիներ մտցնել, (այսինքն՝ մի երկու հոգի, ի հարկէ), և որոնց ամենագլխաւոր հոգսը պէտք է լինի «ամեն տեսակ միջոցներ ձեռք առնել, որպէսզի կարողանան հողատէր ազնուականների և հողազուրկ գիւղացիների միջև ծագած թշնամական յարաբերութիւնները վերացնել և նրանց դրացիական բարի յարաբերութիւնները վերականգնել»:?!

Իսկ այս բարի նպատակին հասնելու համար, մինիստրութիւնը մի շատ երևելի և չափազանց հասարակ միջոց է ցոյց տալիս: Յանձնախմբերը պէտք է պարզապէս «դալալութիւն» անեն. նրանք պէտք է աշխատեն, որ աւելորդ հողեր ունեցող ազնուականները իրանց հողերի մի մասը, կամ թէկուզ հէնց ամբողջը, եթէ նրանք այլ ևս չեն ցանկանում հողեր ունենալ և կանխիկ փողը աւելի են գերադասում, ծախեն գիւղացիներին. իսկ սրանք էլ անպատճառ թող գնեն այդ հողերը, ի հարկէ, այնպիսի մատչելի պայմաններով, որ երկու կողմերն էլ գոհ լինեն!!

Իսկ եթէ գիւղացիները փող չունենան այդ հողերը գնելու, (որ ի հարկէ նրանցից 90% չի էլ ունենայ), այդ պարագայում թող հողային բանկը նրանց օգնութեան հասնի,—ասում է մինիստրական շրջաբերականը: Այլ խօսքերով, թող գիւղացիները այսուհետև հողատէր ազնուականների փոխարէն բանկի ձեռքում խեղդվին, միայն թէ այդ քնքոյշ դալալ—ազնուականները գոհէնիկ գիւղացիների շարունակական սպառնալիքից ազատվեն:

Մինիստրութեան դէպի իր եղբայր ազնուականները ունեցած հոգատարութիւնն ու խնամքը աւելի հեռուն է գնում: Շրջաբերականն ասում է, որ եթէ «դալալ» յանձնախմբերը չը կարողանան վաճառվող հողերի գնի վերաբերեալ համաձայնութիւն կայացնել ծախողի և առնողի միջև, թող նրանք այդպիսի հողերը պետութեան հաշւով գնեն, վճարելով ազնուականներին գանձարանից հողատիրոջ ցանկացած գինը, և ծախելով նոյն հողը առնող գիւղացուն սրա առաջարկած գնով:

Զի՞նչ ցուցանէ առակս զայս: Այն, որ, առանց աղմուկի և առանց «դրացիական բարի յարաբերութիւնները խանգարելու», ազնուականները իրանց ուզած գումարը կը ստանան, իսկ գիւղացիներն էլ, առանց հասկանալու, թէ պետական գանձարանը իրանցից վերցված հարկերովն է լցվում, կուրախանան, թէ արժան գնով հող ձեռք բերեցին և դեռ կառավարութեանն էլ մի մեծ շնորհակալութիւն կը մատուցանեն:

Այս ամենաէական կէտերից զատ, մինիստրութեան շրջաբերականը ուրիշ մի քանի երևելի հոգատարութիւններ էլ է անում դէպի գիւղացիները: Նա պատուիրում է յանձնախմբերին՝ ընդլայնել և դիւրին միջոցներ տալ հողազուրկ գիւղացիներին Սիբիր ու միջին Ասիա գաղթելու համար, և այլն մի շարք այսպիսի կարգադրութիւններ:

«Իսկ գիւղացիների մէջ տարածված այն համոզմունքը,—այս տողերով է վերջանում այդ հռչակաւոր շրջաբերականը,—թէ հողը չէ կարող որևէ մէկի սեփականութիւն դառնալ, այլ պէտք է տրվի աշխատաւորների շահագործութեան համար, և ուրեմն անհրաժեշտ է մասնաւոր սեփականատէրերի հողերը ստիպողաբար գրաւել,—կառավարութիւնը ընդունում է այդ բոլորովին սխալ և պնդում է, որ անյողդողդ կը պահպանէ բոլորի և իւրաքանչիւրի ստացուածքային իրաւունքները... Ռուս գիւղացիութիւնը պէտք է հասկանայ և յիշէ, որ նա իր կարիքների բաւարարութիւնը չը պէտք է խռովութիւններից և բռնութիւնից սպասէ, այլ իր խաղաղ աշխատանքից և Թագաւոր Կայսրի այդ մասին մշտապէս հոգալուց»:

Ո՛րպիսի հնամաշ ու ծամծմած խօսքեր: Սակայն անցել են այն երանելի ժամանակները, երբ այդ կարգի խօսքերը ազդեցութիւն էին գործում: Ամենավերջին գիւղացին անգամ այսօր, մինիստրութեան այդ շրջաբերականը լսելուց յետոյ, գլուխը երկու կը դարձնի, նկատելով իսկոյն, որ սեփականատիրութեան իրաւունքների անունից խօսող մինիստրութիւնը իր շրջաբերականում ոչ մի բառ անգամ չէ խօսում ուդելնի, կաբինետային և վանքապատկան հողերի մասին, որոնք երբեք և ոչ մի տեղ չեն կարող մասնաւոր սեփականութիւն ճանաչվել, իսկ պետական հողերի մասին, որ նոյնպէս ընդհանուրի սեփականութիւն է համարվում, շրջաբերականը կարգադրում է՝ տալ գիւղացիներին «նրանց համար շահաւէտ պայմաններով»!!?

Ժողովրդին պատկանող հողերն անգամ նոյն ժողովրդին դրամով տալու ցանկացող մինիստրութիւնը դեռ ևս յանդգնում է ասել, թէ ժողովուրդը իր կարիքների բաւարարութիւնը չը պէտք է խռովութիւններից ու բռնութիւնից սպասէ, այլ միմիայն բիւրոկրատիայի այդ մասին ունեցած մշտապէս հոգատարութիւնից:

Ո՛րպիսի ծաղր, ո՛րպիսի հեգնութիւն և որպիսի արհամարհանք դէպի ժողովրդային զարթած գիտակցութիւնը:

Խ.—Ազատ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Վերջերս ընտրված ու հետզհետէ Պետերբուրգ եկող Պետական Դումայի անդամները, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, պատմում են, որ գիւղերում ժողովրդի տրամադրութիւնը քանի գնում, աւելի ու աւելի է լարվում: Նամանաւանդ սպառնական տրամադրութիւն է նկատվում շուրջ-Վոլգեան նահանգներում, ինչպէս օրինակ Սամարայի, Սիմբիրսկի, և Սարատովի նահանգները: Գիւղացիները, որտեղ որ հնարաւոր է լինում, հաւաքվում են և իրանց կարիքների ու Դումայի գործունէութեան մասին են խօսում: «Հռետոր» բառը մասնաւոր ժողովրդականութիւն է ստացել գիւղացիների մէջ: Շատ անգամ հեռու տեղերից նրանք քաղաք են գնում և ծանօթներից խնդրում են, որ իրանց համար «Հռետոր» ուղարկեն: Բաւական է, որ մի քանի մարդիկ համախմբվել են, իսկոյն աղաղակում և հռետոր են պահանջում: Հռետորի երևալուն պէս, իսկոյն նրան մի որևէ բարձրութեան վրա են կանգնեցնում և սկսվում են ճառախօսութիւնները:

Կովկասից գնացած սօցիալ-դեմօկրատ պատգամաւորների Պետ. Դումայում յայտնվելով, այնտեղի բանուորական պատգամաւորների խումբը մի տեսակ կազմակերպչական կերպարանք է ստացել: Պէտք է ասել, որ Պետական Դումայի ընտրութիւնների առաջին շրջանում, մինչև սօցիալ-դեմօկրատների վերջին համագումարը, այդ կուսակցութիւնը պաշտօնապէս ընտրութիւններին չէր մասնակցում: Այնպէս որ մի քանի սօց.-դեմօկրատ պատգամաւորների ընտրվելը բոլորովին պատահական բնաւորութիւն էր կրում: Եթէ յիշում են ընթերցողները, մի քանի տեղ նոյն իսկ կադէտները կամովին իրանց տեղերը բանուորական պատգամաւորներին զիջեցին, որպէս զի բանուորական կուսակցութիւնն էլ Դումայում ներկայացուցիչներ ունենայ: Սօց. դեմ. կուսակցութեան վերջին համագումարից յետոյ միայն, ըստ այդ համագումարի որոշման, այդ կուսակցութիւնը սկսեց պաշտօնապէս և եռանդուն կերպով ընտրութիւններին մասնակցել: Եւ առաջին պաշտօնապէս ընտրված սօց. դեմ. պատգամաւորները կովկասցիները եղան: Այդ պատճառով էլ նրանք ամբողջ Դումայի և մամուլի մասնաւոր ուշադրութիւնը գրաւեցին, միևնոյն ժամանակ մեծ ոգևորութիւն պատճառելով այնտեղի սօց. դեմ. պատգամաւորներին: Նրանք արդէն առանձին պարլամենտական խումբ են կազմել իրանց համար լիդեր—ղեկավար ընտրելով Թիֆլիսի պատգամաւոր Ն. Ժորդանիային:

Այդ խմբակի ասելով, եթէ սօց.-դեմ. պատգամաւորների թիւը 30-ի հասնի (շատ տեղերում ընտրութիւնները դեռ չեն վերջացել), այն ժամանակ նրանք Դումայում հրապարակ կը գան ինքնուրոյն օրինագծերով, յայտարարութիւններով և առաջարկութիւններով:

—Մենք կաշխատենք և կը միանանք ամեն մի առաջարկութեան,—ասել է այդ խմբակի լիդեր Ժորդանիան, իրանց ապագայ տակտիկայի մասին խօսելիս,—ինչ կուսակցութիւնից էլ որ լինեն այդ առաջարկութիւնները, միայն թէ նրանք մեզ տանեն դէպի մեր գլխաւոր նպատակը—սահմանադիր ժողովի հրաւիրումը: Դումայում մեր գործունէութեան ծրագրի երկրորդ կէտն էլ հէնց իրան—ժողովրդին դիմում անելն է: Միայն ժողովուրդը կարող է մեր գործունէութեան դատաւոր լինել, միմիայն ժողովրդից ենք մենք աջակցութիւն սպասում:

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄՏՑՈՒՄ ԵՒ ՈՉ ԲՕՅԿՕՏ

Երևան, 22 յունիսի

Ամեն անգամ, երբ ընդհարում է լինում հայերի և Թուրքերի մէջ և երբ այդպիսով կարճ կամ երկար ժամանակով կտրվում է յարաբերութիւնը այդ երկու ժողովուրդների մէջ, տեղի թէ անտեղի առաջ է գալիս բոյկոտի հարց: Եւ ահա այդ ժամանակ մենք տեսնում ենք թէ ինչպէս մի ժողովուրդ կամայ թէ ակամայ ձեռք է առնում և կատարում այն առևտուրը կամ գործը, որը դրանից առաջ գտնվում էր բացառապէս միմիայն մի ժողովրդի ձեռքում:

Բերենք մի երկու օրինակ:

Մինչև անցեալ տարվայ հայ-Թուրքական ընդհարումները Երևանում շաքարի, նաւթի և ալիւրի գործն էլ, շատ ուրիշ առևտուրների թւում, գտնվում էր միայն հայերի ձեռքում և այդ կենսական մթերքները Թուրքերը միայն հայերից էին գնում: Միւս կողմից էլ թխած լաւաշ հացի, մսի, կանաչեղէնի և մրգեղէնի գործն ամբողջապէս Թուրքերի սեփականութիւնն էր կազմում: Սրանք խոշոր գործերն էին. համարեա այդպէս էլ բաժանված էին համեմատաբար աւելի մանր գործերը և արհեստները. այսպէս օր. համալութիւն, այգեպանութիւն, քաղհան, բոստանչութիւն և այլն կատարում էին մեծ մասամբ Թուրքերը, առաւելապէս Պարսկաստանից եկած համշարիք, իսկ հիւսնութիւն, քարտաշութիւն, դերձակութիւն և այլն կատարում էին հայերը:

Ընդհարումների շնորհիւ առաջ եկած ազգայնական ատելութեան պատճառով յարաբերութիւններն այնպէս լարվեցին ու թշնամական դարձան, շփումը, միմեանց մօտ գնալ-գալն այնպէս երկիւղալի ընթացք ստացաւ, որ ամեն մի ժողովուրդ աշխատում էր ինքն իր ձեռքով կատարել այն գործը, արտադրել այն ապրանքը, որը ձեռք բերելու համար նա առաջ ամենայն հեշտութեամբ դիմում էր միւս ժողովրդին։

Այս մի տարուայ ընթացքում մենք տեսանք թէ ինչպէս Թուրքերի մէջ առաջ եկան մեծ պարտիաներով—վագոնով ալիւր, նաւթ և շաքար ստացող վաճառականներ ուղղակի դրանց գործարաններից, ինչպէս և մի քանի ուրիշ մանր գործեր ևս սկսեցին զարգանալ նրանց մէջ, իսկ միւս կողմից էլ հայերն իրանց ձեռքն առան լաւաշ հաց թխելու գործը և մասամբ էլ մրգավաճառութիւնն ու մսագործութիւնը։

Այդ ամենն առաջ եկաւ, թէև կարճ ժամանակի ընթացքում, առևտրական պահանջի, անհրաժեշտ կարիքի պատճառով, թէև պէտք է ասել որ դրանց սկզբնաւորութեան ժամանակ մեծ դեր է կատարել և բօյկօտը, որ, թէև շատ անկանոն ու կարճ տևականութեամբ, մի ժողովուրդ մղել է միւսի դէմ, սաստիկ թշնամական կրքի ազդեցութեան տակ։

Այսպէս մենք միշտ տեսնում էինք թէ ինչպէս ամեն անգամ ընդհարման հենց հետևեալ օրը չեզոք տեղից ստեղծվում էին հայերի մէջ մսագործների, հացթուխների ու մրգավաճառների խանութներ և այլն, իսկ միւս կողմից էլ Թուրքերն էին աշխատում բաւարարութիւն տալ իրանց պահանջներին, չը դիմելով հայերի օգնութեան։ Մղվում էր մի ոյժեղ բօյկօտ։ Թուրքը Թուրքին էր արգելում հայից բան գնելը, իսկ հայը հայի ձեռքից էր առնում, գետին շպրտում ու տրորում այն միսը, միրգը, մածունը և այլն, որ նա գնած էր լինում Թուրքից… Այդ ամենի հետևանքը լինում էր կրքերի աւելի բորբոքումը, յարաբերութիւնների աւելի սրումը և հետևապէս թշնամական, անհանգիստ դրութեան աւելի երկար տևումը, իսկ օգուտը միայն այն, որ բօյկօտ հրատարակող կողմը ստիպած էր լինում միւսին ամեն միջոց գործ դնել իր ձեռքն առնել և այն գործը, որը մինչ այդ ժամանակ գտնվում էր միւսի ձեռքում։

Բօյկօտը բարոյական ոչ մի օգուտ չէր տալիս, իսկ նիւթական—շատ ու շատ չնչին։ Սակայն եթէ հաշւեկշիռ կազմելու լինենք այս մի տարուայ համար, կը տեսնենք, որ նա շատ աւելի վնասակար է եղել հայերի համար, քան թէ Թուրքերի։ Պարզ է։ Մինչ այդ ժամանակ Թուրքն իր ձեռքում առևտրի շատ քիչ ճիւղեր ունէր, որը նա բօյկօտի շնորհիւ աւելացրեց, այն ինչ հայն առաջ իր ձեռքում շատ բան ունէր, իսկ այժմ հետզհետէ դա պակասում է, քիչ-քիչ անցնելով և Թուրքի ձեռքը…

Եւ եթէ միշտ էլ այդպէս շարունակվի, հայն անհամեմատ աւելի շատ կորուստ կունենայ, քան թէ Թուրքը։

Բօյկօտը մեզ ընդհանրապէս՝ թէկուզ հէնց նիւթական տեսակէտից՝ օգուտ չէ։

—

Սակայն եթէ բօյկօտը չը պէտք է անենք, դա չէ նշանակում թէ չը պէտք է լինի և մրցում։ Ընդհակառակն, սա մինչև անգամ անհրաժեշտ է։

Հայն իբրև աւելի հին առևտրական ժողովուրդ պէտք է գործ դնի իր բազմամեայ հմտութիւնը աւելի բարձր դիրք գրաւելու առևտրա-արդիւնաբերական ասպարիզում. դա նրա համար ոչ միայն նիւթական, այլ և շատ անգամ, կենսական խնդիր է։

Բերենք հէնց թէկուզ մսավաճառութեան օրինակը։

Դա ամբողջապէս կենտրոնացած է եղել Թուրքերի ձեռքին վաղուց ի վեր և պէտք է ասել որ Թուրք ղասաբ (մսավաճառ) դասակարգը միշտ իր ձեռքում է պահել այդ շահաւէտ գործն իբրև նրա ազգային մօնօպօլիա։ Հայը ոչ միայն չէ կարողացել այլ և յաճախ չէ համարձակվել ինքն էլ այդ գործով պարապել, մրցել նրա հետ։

Դրա հետևանքն այն էր լինում, որ միշտ տակսա դնելու նախօրեակին 7—10 օր շարունակ Թուրքերը շուկայում մսի սով էին սարքում (բասարաս) և միշտ այդպիսով ճնշում գործ դնում ու իրանց ուզած գինը նշանակել տալիս։ Չը կար նրանց դէմ մրցող, ասպարէզն ամբողջապէս նրանց էր պատկանում և նրանք էլ տնօրինում էին ինչպէս ուզում էին…

Սակայն վատ կողմը միայն դա չէր. Թուրքը հային տալիս էր մսի ամենավատը, երբեմն հին ու սատկածի միս, հայի հետ իր վարմունքը մինչև յանդգնութեան հասցնում, իսկ վերջին դէպքերի ժամանակն էլ հէնց Թուրք ղասաբներն էին, որ առաջինը նախայարձակ էին լինում նրանց մօտ եղած հայերի վրա…

Դիակի և արեան հետ գործ ունեցող այդ մասնագէտները էին, որ արիւնուշտ կերպով կոտորում էին ինչպէս ոչխարներին, այնպէս էլ այս մի տարում հայ մարդկանց…

Թուրքերի ղասաբխանէն միշտ ամենավտանգաւոր տեղն է եղել ընդհարումների ժամանակ…

Հայ-Թուրքական վերջին ընդհարումը ստիպեց Թուրք մսագործներին հեռանալ շուկայից և ահա հայ Թաղերում առաջ եկան հայ մսավաճառների բազմաթիւ խանութներ, որոնք չը նայած իրանց մի քանի անյարմարութիւններին, աջողութիւն էին ունենում։

Դրանց նպաստում էր ոչ միայն հայերի դէպի Թուրքերն ունեցած յուզմունքը, այլ և հասարակութեան ստորին խաւերի գործ դրած բօյկօտը, որը հայերը հասցնում էին մինչև իրար հայհոյելու և հարուածելու աստիճանի…

Սակայն այդպէս չէ կարող երկար տևել—բօյկօտը չէ, որ կարող է սանձահարել Թուրքին, հասկացնել նրան, որ նա առանց հայի չէ կարող ապրել. և ոչ մի բանում բօյկօտը չէ կարող աջողութիւն ունենալ և յարատև լինել, մինչև որ հայը հային չը հայթայթի այն ապրանքը, նոյն յատկութեան և նոյն գնով, ինչ որ տալիս է Թուրքը։

Դրան կարելի է հասնել մրցման ճանապարհով։

Երեկվայ չարչի և բախկալ Թուրքն այսօր վագոնով շաքար, նաւթ ու ալիւր է ստանում, առևտրական մրցում կատարում հայի հետ. իսկ հայը չէ կարողանում մի քանի մսավաճառութեան խանութներ բանալ և ազատել իր հասարակութիւնը Թուրք մսավաճառի քմահաճոյքից և երբեմն էլ նրա սուր դանակից…

Ահա այս տեսակէտից պէտք է աջողութիւն ցանկանալ այն մի խումբ անձնաւորութիւններին, որոնք վերջին դէպքերից յետոյ լուրջ ուշադրութիւն դարձնելով այդ կարևոր գործի վրա, աշխատում են կազմել մի փոքրիկ ընկերութիւն, մսավաճառութեան մէջ Թուրքերի դէմ մրցելու համար և հաւատացած ենք, որ գործին եռանդով կպչելով կարելի կը լինի շատ հեշտութեամբ գլուխ բերել դա։

Բօյկօտը ոչ միայն ցաւալի չէ, այլ և երկարատև չէ կարող լինել. անհրաժեշտ է ուժեղ և խելացի մրցում, որն աւելի շուտ կը հասցնի նպատակին։

Լ. Մարկոսեան

ԿՌԻ՞Վ, ԹԷ ՄԱՐԴԱԳՈՂՈՒԹԻՒՆ

Մի տարուայ փորձը ցոյց տուեց, որ մեր հարևան՝ երբ հրապարակային կռւի, ճակատամարտի մէջ գլուխ չունին։ Նրանք շատ են փախչում մեր գնդակի աչքից։ Եթէ նրանք մարտակոչ անէին և կանգնէին հրապարակում, հային դէմ յանդիման, անկասկած մեծ պարտութիւններով ու կորուստներով յետ կը դառնային դաշտից։

Այդ տեսան իրանք մի քանի կռւում։

Տեսան և փոխեցին իրանց կռւի եղանակը։

Նրանք վերադարձան իրանց նախկին սովորութեան, նահապետական փեշակին։ Նրանք վերադարձան գողութեան, դարանների տակ մտին՝ Թփերի ու ծառերի, քարերի ու խոռոչների ետևում և սկսեցին տմարդի կռիւ. ճանապարհներ կտրեցին և խաղաղ ճամբորդներին ոտով գլխով գողացան։

Ահա ձեզ օրինակներ։

Ահա ձեզ Եւլախի դժոխքը.—այդտեղ մորթում են հայերի գործարանների տէրերին, գործակատարներին, ծառայողներին, որոնք անզէն, անճար՝ իրանց կեանքը դրել են նրանց խնամքի տակ և հաւատալով նրանց խօսքին թէ՝ ձեզ ձեռ չենք տալ, նստել են միամիտ ու… զոհ գնացել նրանց խաբեբայ բարբարոսութեան։ Այդտեղ այդ մարդիկ Թուրքերի մէջ տարեկան մի միլլիօնի չափ փող էին Թողնում խաղողի, ցորենի, մրգեղէնի համար. ի՞նչ շահվեցին նրանց կոտորելով և գործարանները հրդեհելով։ Եւ այսօր, ո՞ր հայը, ո՞ր քրիստոնեան սիրտ կանի այդ արեան դաշտը ոտք կոխել…։

Ահա ձեզ անցեալ տարուայ 30 զոհերի և այս տարուայ 45 խաչվածների ուրուականը։ Դրանք ընկնում են մարդու մտքից, փնում են աչքի առաջից, իսկի մոռացվում են։ Կին, երեխայ, տղամարդ՝ բոլորին անխտիր քշում էին ոչխարի պէս դէպի սպանդանոց, դէպի խաչափայտ։ Միամիտ մանուկներն ու փոքրիկ երեխաները գզգզած կանաչկոտների մէջ վայրի ծաղիկներ էին փնտրում և իրար ձեռքից խլում, իրար վրա յարձակվում, չիմանալով որ կէս ժամից յետոյ այդ կանաչներն ու ծաղիկները իրանց արիւնով պէտք է ներկվեն…։ Դրանք մոռացվելու՞ են…։

Ահա ձեզ հայ ուսուցիչը, վաճառականը։ Նրանք գնում են «խաղաղ» յայտարարված ճանապարհով, անցնում են «Եարման», կտրում են կէս ճանապարհ դէպի Թթու-Ջուր՝ Գօրիս գնալու համար, և յանկարծ մօտիկ լեռների ծերպերից շվվում են անհամար համազարկեր, ծակոտում, ցնցոտիներ դարձնում Թանգագին կեանքերի, մարդկային մարմինների ամբողջ մորթը, իրանը. մօտենում, մաշկում երեսը, կտրում քիթ ու ականջ և բարբարոսութեան ամենավերջին այլանդակութեան ու ծայրայեղութեան հասցնելով՝ մարդկային պատկերին զզուելի անորգանք Թողնում…։

Ահա ձեզ խումբ խումբ սայլաւորներ, ձիաւորներ, էշաւորներ—բոլորը գիւղական բանւոր, մշակ մարդիկ, ո՞րը փայտ է ծախ բերում, որը ալիւր է տանում քաղաքից. Դրանց չորս բոլորը կտրում են խոռոչներից դուրս Թափվող զինված մարդիկ, անհամար Թւով, կատաղի մռնչիւնով, սպառնալիքներով, սոսկում ազդող շարժումներով—և հրացանների փողերը ցանցի են կապում, ցանկապատ կազմում դրանց չուրջը, լռեցնում, լեզուները լալկացնում։ «Ձեր զոհն ենք, ինչ ուզում էք արէք». աղաղակում են անզէն մարդիկ։ Ի՞նչ պէտք է անեն, եթէ ոչ քշել տաւարի պէս դէպի մացառուտները, քարանձաւները, անտառի խորքը և պաղ, անձայն զէնքերով կտրել նրանց լալկված լեզուները, նրանց չորացած կոկորդները…։

Ահա ձեզ Թուրքի լեզուին խաբվող մարդիկ, որոնք հաւատում են թէ՝ կը գնան, կը մտնեն հարիւր տարվան քիրվայի, հարևանի տունը և դարման կը ստանան իրանց վերքերին ու վշտերին, յետ կառնեն իրանց գերին, իրանց ապրանքը. բայց… մտնում են ու դուրս չեն գալիս, և քիրվայի բարեկամութիւնը տմարդի թշնամութեան փոխված՝ յաւիտեան հիւրընկալում է իր յարկի տակ իր բարեկամի արիւնը միայն…։

Գողութիւն, գերութիւն, տմարդի, դարանամուտ սպանութիւն, եղեռն և… անվերջ։

Անվերջ, քանի նա ճակատ առ ճակատ չէ դուրս գալիս կռւի դաշտ…։

Եւ նրանց այս բռնած ընթացքը հիմք է տալիս մեզ պնդելու, թէ Թուրքը ոչ յարձակում կը գործէ և ոչ կռւի հրապարակ դուրս կը գայ, այլ փախուստ տալով մեր երեսից՝ միշտ իր զոհը, իր շահը իր բնածին փեշակների մէջ կը փնտրէ և իր ստոր նպատակին կը հասնէ։

Իսկ մե՞նք…—Աւաղ, ընդունակ չենք մարդագողութեան։

Տ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 26 յունիսի

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի խնդրելու ձեզ տպագրել 1906 Թ. մայիսի 4-ին Թիֆլիսի ժողովարանում ընկերութեան օգտին կայացած զբօսանքի հաշիւը։

Մուտք եղել է. մուտքի տոմսերից 354 ր. 21 կոպ., կոնֆետտի վաճառումից 66 ր. 20կ., ծաղիկներից—35 ր. 10., կարթօսից 20 ր. 14 կ., վիճակախաղից 422 ր. 52 կ., բուֆետից 164 ր. 51 կ., Petits cheveaux 63 ր. 30 կ., ձուախաղից 10 ր. 76 կ., նշան խփելուց 8 ր. 61 կ., պօստից 25 ր. 30 կ., պրեմիա—15 ր. 18 կ., ընդամենը մուտք եղել է 1201 ր. 83 կ.

Ծախս. Թիֆլիսի ժողովարանի վարձ—200ր. եւրօպական և ասիական երաժշտութեան 33ր. 50 կ., կահ-կարասիքի և ամանեղէնների քրէհ 30 ր., այգին զարդարելու համար 101 ր. 20 կ., յայտարարութիւնների, աֆիշաների, տոմսերի և հրաւէրների տպագրութեան 27 ր., վիճակախաղի համար նուէրներ 140 ր. 89 կ., բուֆետի ծախս 70 ր. 42 կ., վիճակախաղի 3 արկղներին 15 ր., վիճակաթերթերի համար օղակներ 4 ր. 20 կ., ծաղիկներ և կոնֆետի գնելու 10 ր. 25 կ., մարկաների և բաց նամակների—6 ր. 50 կ., իրերը տեղափոխելու մշակներին, ծառաներին, ոստիկաններին և իրերը պահպանելու համար 31 ր. 80 կ., մանր ծախսերի 8 ր. 23 կ., յափշտակած ձուախաղի մուտքը մի չարագործի ձեռքով 11 ր. 76 կ. ընդամենը ծախս է եղել 690 ր. 75 կ.։ Զուտ արդիւնք մնացել է 501 ր. 8 կ.։

Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք նպաստեցին զբօսանքի աջողութեանը։

Գործավար ընկ. Յով. Կարապետեան

—

Թիֆլիս, 26 յունիսի

Եթէ համամիտ են Ներսիսեան դպրանոցի նորընտիր բոլոր հոգաբարձուները «Ալիքի» մէջ տպված «Անզօր ոտնձգութիւն» անուամբ յօդուածին, Թող իմանան որ հին հոգաբարձուները այլ կերպ վճիռ չէին կարող դնել։ Ինչպէս կանոն և սովորութիւն է դարձել մինչև այժմ, ամեն տարի քննութիւններից յետ յայտնվում է ուսուցիչներին, որ նրանք առաջիկայ տարին նոյնպէս մնում են պաշտօնի մէջ, իսկ եթէ լինում են անհամապատասխան անձինք, արձակվում են։ Քանի որ հին հոգաբարձուները պարտաւոր էին պատասխանել ուսուցիչներին, ուստի վճռվեց Թողնել պաշտօնի մէջ, ինչպէս ծանօթ ուսուցիչների։

Դուք ուզում էք 27 ուսուցիչները մենք հեռացնենք, որպէսզի դուք ընտրէք նորերը, այդ տեսակ վճիռ մեզ համար անկարելի էր, անկարելի է և ձեզ համար, դուք պարտաւոր էք մէկ տարի ուսումնասիրել հին կազմը և ապա փոփոխութեան ենթարկել։ Եթէ մի վայրկեան ընդունենք ձեր առաջարկութիւնը, ուրեմն ամեն մի հոգաբարձական կազմ չորս տարին լրանալուն յետ պէտք է արձակէ ուսուցչական խումբը. ո՞ր ուսուցիչը այդ պայմանով կը մտնէ պաշտօնի մէջ, և ի՞նչ դրութեան կը հասնէ այդ տեսակ խոշոր դպրանոցը, եթէ այդքան փոփոխութեան ենթարկվի. ոչ մի իրաւունք չունէք այդ խնդրի մէջ մեղադրել հին հոգաբարձութեան, մանաւանդ այժմ, քանի որ դուք հաստատված չէք և չը գիտէք երբ կը հաստատվէք ձեր պաշտօնում, իսկ մենք պարտաւոր ենք ուսուցիչներին պատասխանել և չը Թողնել անորոշ դրութեան մէջ, և մեր պատասխանը մեզ ծանօթ ուսուցիչներին այժմեան վճիռը պէտք է լինէր։

Ինչ կը վերաբերէ կալուածների համար ձեր յանդիմանութեան, այդ խօսքերը հնացած, մաշված, նշանակութիւն չունեցող խօսքեր են. մենք համոզված ենք, որ մեր ընդդիմութեան ձեր դուք չէք ընդունիլ, իսկ այսօր հեշտ է մեղադրել նրանց, որոնք գործում էին դժուար օրերում։

Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձուներից մէկը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զօրավար Ի. Մ. Դօլուխանեանը ներկայացրել է Թիֆլիսի քաղաքային Դումային մի յայտարարութիւն, որի մէջ նկարագրում է տեղական պրօգրեսիւ մամուլի ժամանակակից անխնայելի վիճակը, որի մէջ դրված է նա գեներալ-նահանգապետի կարգադրութիւնների շնորհիւ։ Վերջինս մինչև վերջին ժամանակներս փակել է 37 հրատարակութիւններ և 3 տպարաններ, իբրև թէ վնասակար ուղղութեան համար, թէև ակներև կերպով պարզ է, որ տպարանները ոչ մի ուղղութիւն չեն կարող ունենալ, որը երևում է հէնց փակված «Գուտտենբերգ» տպարանի օրինակից, ուր տպագրվում էին զանազան ուղղութեամբ երեք լրագիրներ՝ «Голосъ» Кавказа», «Կայծ» և «Гвоздь»։ Այնուհետև ձայնաւոր Դօլուխանեանը մանրամասն կերպով կանգ է առնում գեներալ-նահանգապետի գործողութիւնների օրինաւորութեան վրա պետական կարգապահութիւնը և հասարակական հանգստութիւնը պահպանելու համար։ Եւ այդ տեսակէտից էլ գտնում է նրա գործողութիւնները անհիմն, որովհետև իշխանութեան կողմից հալածված պրօգրեսիւ մամուլը հէնց պաշտպանութեամբ սկսեց պետական կեանքը, ձգտում է նպաստել մեզանում իրաւակարգ ստեղծմանը և ապահովել իսկական պետական և հասարակական հանգստութիւնը։ Քաղաքային դումայի պարտականութիւնն է, որի իրաւասութեան ներքոյ է գտնվում հոգ տանել ժողովրդական կրթութեան զարգացման միջոցների մասին, այն էլ ամենաընդարձակ չափերով, նոյնիսկ տիրող օրէնքների տեսակէտից, նա չը պէտք է լուռ հանդիսատես մնայ ժամանակակից տխուր երևոյթներին, ինչպիսին է պրօգրեսիւ մամուլի դէմ յարուցված հալածանքը, որը կուլտուրայի ամենահզօր գործօններից մէկն է հանդիսանում կրթութեան այն միջոցների մէջ, որոնց կատարելագործումը յանձնված է քաղաքային ինքնավարութիւններին։

—

Կովկասեան ոստիկանական մասի գլխաւոր կառավարչին հեռագրում են, որ, լուրերին նայելով, պարսկական մի աւազակախումբ, բաղկացած 25 հոգուց, Աղրանդի վրայով անցել է ռուսական հողը, Զանգեզուրի գաւառի սահմանները։ Աւազակախմբի դէմ միջոցներ են ձեռք առնված։

—

Բաքւում յունիսի 25-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամի 8-ին, մի անյայտ մարդ մտնում է Բաքւի 2-րդ կայարանի կայարանապետի առանձնասենեակը և ատրճանակի երեք գնդակներով տեղն ու տեղը սպանում կայարանապետ Դ. Ի. Լօպատինին։ Չարագործը անյայտացաւ։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ֆինանսական մասնաժողովի նիստում, որ կայացել է յունիսի 24-ին, քննվել է քաղաքի 1904—1905 Թւի 1,200,000 րուբլու հասնող դեֆիցիտը ծածկելու հարցը։ Մասնաժողովը չը համաձայնվեց վարչութեան առաջարկութեան հետ՝ քաղաքի անշարժ գոյքը գրաւ դնելու բանկերի մէջ, և առաջարկեց վարչութեանը վաճառել նախալօվկներին նրանց կապալով վերցրած գետինները, հաւաքել կապալավճարների ապառիկները և այդպիսով ստացված փողերով ծածկել գոյացած դեֆիցիտը։ Միևնոյն ժամանակ մասնաժողովը որոշել է առաջարկել վարչութեանը ընտրել Դումայից առանձին մի մասնաժողով ապառիկները հաւաքելու համար։ Այդ միևնոյն նիստում մասնաժողովը հաւանութիւն տուեց վարչութեան նախագծին՝ 35 միլիոն րուբլի փոխառութեան համար։

—

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թիֆլիսի բժիշկներից շատերը, մասնաւոր բժշկութեամբ պարապվելուց բացի, վարում են երկ-երկու (և նոյն իսկ աւելի) վարձու պաշտօններ ու այդպիսով երիտասարդ բժիշկների գործունէութեանը վնաս հասցնում, ուստի մօտ օրերս այդ առիթով կայանալու է բժշկական խորհրդակցութիւն բացվող պաշտօնների հարցը կարգաւորելու համար։

—

Դումայի անդամ Րամիշվիլուն ուղարկված է հետևեալ հեռագիրը. «Встань Спящій» շաբաթաթերթը հրատարակելու համար Թիֆլիսի գեներալ-նահանգապետը ուզում էր ինձ բանտարկել, բայց ես հեռացայ։ Այն ժամանակ նա կարգադրեց Օլօնեցկի նահանգը աքսորել կնոջս, իսկ նրա հետ միասին իր եօթ գլուխ երեխաներին։ Միջոցներ ձեռք առէք»։ Ձեզ ծանօթ Բալախան։

—

«Баку» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 23-ին Բաքւի գեներալ-նահանգապետը հաստատել է «Բաքւի Հայոց Կուլտուրական Միութեան» կանոնադրութեան ծրագիրը։

—

Երէկ լոյս տեսաւ ռուսերէն լեզվով նոր լրագիր «Прогрессъ» անունով. որի խմբագիրն է Բելյանաշվիլին։

—

Զանգեզուրի գաւառից ստացված պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, պարսկաստանցի աւազակների մի խումբ, թւով 25 հոգի, Արգենդով անցել է ռուսաց սահմանը կողոպտելու և աւերմունքի նպատակով։ Այդ աւազակախումբը ձերբակալելու համար եռանդուն միջոցներ են ձեռք առնված։ (Т. Л.)

—

Յունիսի 16-ից գեն.-նահանգապետի կարգադրութեամբ փակված «Գուտտենբերգ» տպարանը վերաբացվել է։

—

Շուշու նոր գաւառապետ նշանակված Գերասիմովը կիրակի ներկայացաւ Փոխարքային և երէկ մեկնեց իր պաշտօնատեղին։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է, մեր փոխանորդ Սիոն վարդապետը արդէն, որպէս նշանակվել, հրաժարական է ներկայացրել, ուստի մեզանում շուտով լինելու է նոր փոխանորդի ընտրութիւն։ Ինչպէս լսում ենք, զանազան անձինք մասնաւոր նամակներ են ստանում այս և այն վարդապետից, որ իրանց ցանկանում են ընտրվել Ախալցխայի փոխանորդ։ Շատ ցանկալի էր, որ ընտրվէր այնպիսի մի անձն, որ բացի փոխանորդութիւնից՝ ընդունակ լինէր յանձն առնելու մեր երկսեռ հայ ուսումնարանների տեսչութեան պաշտօնը, որով եկեղեցին ծախսերից քիչ կը Թեթևանար»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Եղանակները մեզանում նպաստաւոր են երկրագործ հասարակութեան համար։ Այս տարի թէև արտերում մկներ չեն երևում, բայց Թրթուրը ոչնչացնում է Փաշաքենդ գիւղի ծառերը. յիշեալ գիւղի մօտիկութեան պատճառով սպառնում է անցնել և քաղաքիս ծառերի վրա։ Քանի դեռ շատ է՝ հարկաւոր է առաջն առնել։ Սակայն մեր ժողովուրդը բոլորովին անտարբեր է։

—

Թիֆլիսի «Հայրենասիրական ընկերութիւնը» վճռեց արտայայտել իր «պարսաւանքը» դէպի Պետական Դուման, պատգամաւոր Րամիշվիլիի արտասանած ճառերի առիթով։ Այդ պարսաւանքը արտայայտվեց Պետական Դումայի նախագահ, Ս. Ա. Մուրոմցեւին ուղարկված հեռագրում։ Այդ հեռագրի պատճենները ուղարկված են մինիստրների նախագահին և ներքին գործերի մինիստրին։ Նման հեռագրեր ուղարկված են նաև «Новое Время», «Правит. Вѣстникъ», «Московскія Вѣдомости» «Колоколъ», «Окраины Россіи» և այլն լրագրների խմբագրութիւններին։ (Т. Л.)

—

Յունիսի 16-ին Գետաբէկի շրջանում պրիստաւ Ալիևը 20 կօզակներով և սարժնիկներով ընդհարվել է աւազակների հետ։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվել են մի կօզակ և մի սարժնիկ. հակառակորդի կողմից սպանվել է մէկ հոգի, վիրաւորվել է նոյնպէս մէկ հոգի. սպանվել են 2 ձիեր, երեքը վիրաւորվել են։ (Т. Л.)

—

Յունիսի 26-ին, երեկոյեան ժամը $8\frac{1}{2}$-ին Վօկզալի փողոցի վրա, ատրճանակի 3 հարվածներով մի անյայտ մարդ ծանր կերպով փորից վիրաւորեց ունտէր-օֆիցէր Պետրենկօին։ Վիրաւորվածը ուղարկված է երկաթուղային հիւանդանոցը։

—

Երկուշաբթի, յունիսի 26-ին Անդրկովկասի երկաթուղու ճանապ. երթեւեկութեան ճիւղի հրամանատար Վարտենբուրգը, վերջացնելով իր գործը, երկաթուղու վարչութիւնից գնաց դէպի տուն։ Երբ նա հասաւ Կիրօչնի և Ալեքսանդրօվսկ փողոցների անկիւնին, 2 անյայտ մարդիկ մօտ 8 անգամ ատրճանակից կրակեցին նրա վրա և սպանեցին։ Սպանողները անյայտացան։ Իսկոյն դէպքի տեղը եկան զինւորները, ձերբակալեցին 4 խանութատէրերի և տարան 10-րդ քաղաքամասի ոստիկանատունը։

—

Երէկ, ցերեկվայ ժամը 1-ին Թալանելու փորձ եղաւ Ախվերդովի գործակատարին։ Չարագործները երկու անգամ կրակել են նրա ետևից Զիգրաշէն եկեղեցու մօտ, բայց գործակատարին աջողվել է ազատվել եկեղեցու բակի միջով փախչելով։

—

Երէկ առաւօտեան Զինգերի կարմեքենավաճառ Բաղդասարեանը գնալով խանութ, որ գտնվում է Գօլովինսկի պրօսպէկտում, Առաֆիլեանի տանը, գտել է խանութը կոտրած թէ դրսից և թէ բակի միջից։ Անյայտ գողերը տարել են 120 ր. կանխիկ փող, 200 րուբ. Թել և ուրիշ իրեր, որոնց արժէքը չէ որոշված։

—

Գօրի քաղաքի բնակիչները Փոխարքային ներկայացրել են մի հաւաքական բողոք գաւառապետ Եօնտովի անկանոն գործունէութիւնների վերաբերեալ։ Եօնտովի կարգադրութեամբ բնակիչներից տուգանքներ են հաւաքել, առանց անդորագրերի, կամ տալով Թղթի կտորի վրա մի ստորագրութիւն։ Բողոքողները խնդրում են Փոխարքային գործը քննել և իրանց վճարած փողը յետ դարձնել։

—

Այգիների ծաղկանոցների բանւորները ներկայացրին իրանց տէրերին մի շարք տնտեսական պահանջներ իրանց վիճակը բարելաւելու համար։ Այդ պահանջներին բաւարարութիւն տալու համար բանւորները 3 օր ժամանակ են տուել, հաշւելով յունիսի 27-ից։

—

Գօրեմիկինի կաբինետի կարճատև գործունէութիւնը աւարտված պէտք է համարել։ Ստիշինսկու, Կօկօվցեվի և ընկերութեան բոլոր ջանքերը՝ կաբինետի դրութիւնը ամրապնդելու համար, իրական դեր խաղացին 2 ամիս միայն։ Յունիսի 19-ին պալատականները յարմար գերադասեցին Պետական Խորհրդից և Պետական Դումայից խառը կազմված նոր կաբինետի Թեկնածուների ցանկը։ Այդ ցուցակը առաջարկում է պրէմիէրի պաշտօնի համար Երմօլօվին և մինիստրներ՝ Ուրուսօվին, Ստախօվիչին, Հերցենշտէյնին, Նաբօկօվին, Տիմիրեազեվին և Կուզմին-Կարավայևին։ «Мысль»

—

Ժողովրդական համալսարանների համառուսական ընկերութեան անդամների համագումարը կայանալու է Պետերբուրգում ոչ թէ աշնանը, ինչպէս որ մտադրութիւն կար առաջ, այլ ներկայ տարուայ դեկտեմբերի երկրորդ կէսին։ «Прав. Вѣст.»

—

Կարգադրութիւն է արված, որ Դօնէցկի նահանգը աքսորված քահանաներին վերադարձնեն։ (Շր.)

—

Պետերբուրգի քաղաքապետին մի քանի ժամանակ առաջ ներկայացրել էին աւտօնօմիստների և ֆեդերալիստների համառուսական ակումբի կանոնադրութիւնը։ Մօտ օրերս այդ կանոնադրութիւնը հաստատվել է արդէն։ Ներկայումս նրա հիմնադիր անդամները՝ Բօդուէն-դէ-Կուրտենէ, և Գիլեւթ զբաղված են նրա կազմակերպութեամբ։ Հէնց որ բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնները վերջացվեն, ակումբը կը սկսէ իր գործունէութիւնը։

—

«Рѣчь»-ին հեռագրում են Կօֆնայից. յունիսի 19-ին կալանաւորված է 3-րդ մասի գործավարը, որի մօտ գտնվել են ռումբեր։ Հաստատվել է, որ նա գրում է եղել «Բունդի» անունից կեղծ սպառնական նամակներ ոստիկանապետին։ Կալանաւորութիւնը աղմուկ է առաջ բերել։

—

Յունիսի 20-ին բանտից ազատված է հռչակաւոր Շչէրբակօվը, գիւղացիական միութեան կազմակերպողը։

—

Рѣчь-ը հաղորդում է, որ միտրօպօլիտ Անտօնինը ստացել է գաւառական քահանաներից «աղերսագիր», որի մէջ նրանք այն կարծիքն են յայտնում, որ անհրաժեշտ է եկեղեցին բաժանել պետութիւնից։

—

«Наша Жизнь»-ի ասելով, յունիսի 19-ին Պետական Դումայի անդամ Անիկինը ստացել է Հէլսինգֆօրսում բնակվող 2-րդ ֆինլանդական գնդի զինւորներից մանրամասն տեղեկութիւն 600 զինւորների Թունաւորութեան դէպքի մասին։ Զինւորները իրողութիւնը նկարագրելուց յետոյ, աւելացնում են. «Դիմում ենք ձեզ, ժողովրդական ներկայացուցիչներիդ, ցոյց տուէք բոլորին թէ ինչ վիճակի մէջ է գտնվում զօրքը։ Այդ առիթով անյապաղ բացատրութիւն պահանջեցէք զինւորական մինիստրից»։

—

Պետերբուրգում յամառ կերպով լուր է պտտում, որ մօտ ժամանակներս Թագաւոր կայսրը և գերմանական Վիլհելմ կայսրը տեսակցութիւն են ունենալու։ Տեսակցութեան տեղը նշանակված է Դանցիգ։

—

Գօրեմիկինի գնալը Պետերհօֆ յունիսի 21-ին վերջնականապէս վճռել է կաբինետի ճակատագիրը։ Բարձր շրջաններում ընդունել են, որ կաբինետի անգործութիւնը սպառնում է վարկաբեկ անել Բարձրագոյն իշխանութիւնը, որովհետև կաբինետի անդամները և նրանց ներկայացուցիչները ոչ միայն չը կարողացան յարգանք ներշնչել դէպի իրանց ժողովրդական ներկայացուցիչների կողմից, այլև դեմօնստրատիւ կերպով աշխատում էին ցոյց տալ, որ նրանց ամբողջ ոյժը նրա մէջն է կայանում, որ նրանք նշանակված են Բարձրագոյն իշխանութեամբ։ Իրերի մի այդպիսի դրութիւն վճռական կերպով դատապարտվում է պալատում, և այնտեղ գտնում են, որ նա այդպէս շարունակվել այլևս չէ կարող։ Յամառ կերպով խօսում են, որ վճռված է նոր կաբինետ կազմելու։ Բեռլինից տեղեկութիւն է ստացվել, որ այնտեղ մեծ հետաքրքրութեամբ են հետևում Ռուսաստանում կատարվող բոլոր անցքերին։ Բեռլինի խորհուրդները ազդեցութիւն արեցին, մանաւանդ որ պալատում գիտակցեցին, որ Դումայի մեծամասնութիւնը անկասկած հոգ է տանում Բարձրագոյն իշխանութեան վարկը բարձր պահելու համար, շարունակ մատնացոյց անելով, որ պատասխանատուութիւնը կառավարութեան բոլոր յանցանքների համար բացառապէս ընկնում է մինիստրների վրա, և նրանց ձգտումը՝ Թագնվել Բարձրագոյն իշխանութեան ետևում՝ չը հասաւ իրանց նպատակին։ Պալատում վճռել են հակառակ դէպքում մի քանի օր էլ սպասել, որպէսզի Պետական Խորհուրդը կանոնաւոր կերպով սկսէ իր գործունէութիւնը։

—

Լուրերին նայելով, ոստիկանական դեպարտամենտի կառավարիչ Վուիչի անկումը բացատրվում է նրանով, որ դեպարտամենտի պաշտօնեաները հսկում էին «առողջաւոր պալատի» անդամներին և ի միջի այլոց բաց արին «զինւորական վերանորոգութեան ընկերութեան» գործունէութեան ծրագիրը։

—

Յամառ լուր է պտտում, որ Գօրեմիկինը յունիսի 20-ին խորհրդի նիստում յայտնել է, որ խորհրդին առաջարկված է հրաժարական տալ։ Այդ միևնոյն աղբիւրներից հաղորդում են, որ նոր խորհրդի կազմելը յանձնարարված է Երմօլօվին։

—

Գեներալ Պավլօվը, որին Դուման հրաժարվեց ունկնդրութիւն շնորհել, իրան այնքան վիրաւորված է համարել, որ յունիսի 20-ին խնդիրք է տուել իրան արձակելու կամ մի որևէ ուրիշ պաշտօնով փոխադրելու մասին։ Այդ հարցը կը քննվի մինիստրների խորհրդի մէջ։ Զինւորական մինիստրը անկարելի է համարում Թոյլատրել Պավլօվին անմիջապէս հրաժարվել։ Հեռանալ, նրա կարծիքով, պարտաւոր են ամենքը միաժամանակ։

—

Պետերբուրգում լուր է պտտում, որ զինւորական մինիստր Ռէդիգէրը Թողնում է իր պաշտօնը։ Զինւորական շրջաններում շատ դժգոհ են զինւորական վարչութեան մէջ նրա կատարած մի շարք կարգադրութիւններից, որովհետև կարևոր պաշտօններ տալիս են գեներալ Ռէդիգէրի սիրելիներին։ Այդ հանգամանքն էլ պատճառ դարձաւ մինիստրի անկմանը։

—

«Р. В.» լրագիրը լսել է, որ Բէլօստօկի Թափօրի վրա ռումբ նետող և հրէական ջարդ առաջացնող գիւղացին, որ կալանաւորված էր, յայտնի չէ թէ ում ձեռքով ազատված է կալանաւորութիւնից։ Այնտեղ է ուղարկվում ներքին գործերի մինիստրութեան պաշտօնեան այդ դէպքի մասին քննութիւն կատարելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԱՊՕՆԻԱՆ ԵՒ ԻՍԼԱՄԸ

—

Վերջին ժամանակներս Կովկասի և արտասահմանի Թուրք մամուլը յամառօրէն զբաղվում է մի հարցով, որը պիտի զարմացնէ շատերին. որպէս թէ Եապօնիան պատրաստվում է, տրամադիր է ընդունել… իսլամը։

Պիտի զարմացնէ, ասում եմ, որովհետև այն ժողովուրդը, որ ամենից քիչ վարակված է կրօնական կրետինիզմով, այն ժողովուրդը, որ իր գերազանց կենսունակութեան փառաւոր ապացոյցը տուեց հէնց նրա համար, որ անբանացած չէր կղերական զանազան քաղցած դօգմաներով—այժմ, յանկարծ, գալիս են մեզ յայտնելու, որ հէնց այդ ժողովուրդը պատրաստվում է ընդունել իսլամը։

Մեզ զարմացնողը այն չէ, որ Եապօնիան ցանկանում է որդեգրել իսլամը, այլ մի որևէ կրօնք, լինի դա քրիստոնէութիւնը կամ մահմեդականութիւնը, որովհետև մեզ համար բոլոր կրօնքները, իրանց պարունակած մետաֆիզիքական տխմարութիւններով, միևնոյն արժէքն ունեն, այսինքն նոյնքան անբանացուցիչ են, որովհետև հաւատալ մի կրօնի, նշանակում է հրաժարվել իր բանականութիւնից, իր առողջ դատողութիւնից և հալած իւղի տեղ ընդունել այլևայլ ոտքի վրա քնեցնող հէքիաթներ։

Կրօնքները հանդիսացել են հզօրների, իշխողների ձեռքում տիրապետութեան հաստատ գործիքներ։ Իշխանները՝ ըմբոստ ու դժգոհ մարդկութիւնը ընկճելու, իրանց բռնապետութեան հլու ստրուկները դարձնելու համար դիմել են երկու գլխաւոր զէնքի. մարմնաւոր-ֆիզիքական և մտաւոր-բարոյական. մարմինները սանձել են բանակներով և ուղեղները, կրօնքներով։

Ահա այս տեսակէտից գուցէ Եապօնիան, ուր արդէն մտել են արդիւնաբերութեան արագ և խոշոր ձևերը և ստեղծել աշխատաւոր բազուկների լէգէօն, պրօլետարական մասսա, այս տեսակէտից, ասում ենք, Եապօնիան, պաշտօնական ու տիրապետող Եապօնիան, փորձէր գուցէ ընդգրկել մի նոր կրօնք։

Բայց մենք ցոյց տանք, թէ ինչ են ասում Թուրք Թերթերը։

Այդ Թերթերի համաձայն Եապօնիայում գոյութիւն ունի «Կրօնքների ուսումնասիրութեան մի ընկերութիւն», որը քննում է բոլոր կրօնքները նրանցից լաւագոյնը ընտրելու և տարածելու համար Եապօնիայում։

Մինչև այստեղ դեռ ևս ոչինչ կայ, որ խանդավառէր Թուրքերին։ Բայց, մահմեդական մամուլը աւելացնում է, որ այդ ընկերութիւնը մասնաւոր հակում և քնքշութիւն է ցոյց տալիս դէպի իսլամիզմը։

Այսպէս նախ խօսեցնենք Պետերբուրգի «Իւլֆէթ»-ը, Աբդիւլ Րէշիդ Իբրահիմօվի օրգանը, որը տոն է տալիս Ռուսաստանի Թուրք մամուլին, և որի անունով է երդվում ռուսական համարեա ամբողջ մահմեդականութիւնը։

Կրօնքների և դաւանութիւնների ճշմարտութիւնները հետազօտելու համար Եապօնիայում մի ընկերութիւն էր հիմնվել։ Սակայն եօթ-ութ տարուց ի վեր այս ընկերութիւնը մի քանի հանգամանքների պատճառով ստիպվել էր իր գործունէութիւնը դադարեցնել։ Այս տարի յիշեալ ընկերութիւնը ամեն կողմ յայտարարեց, որ յունիսի սկզբներում պիտի վերսկսէ կրօնքների հետազօտութիւնը։ Կաթօլիկ, բողոքական և քրիստոնէական այլ դաւանութեան միսիօնարներ գնացել են Եապօնիա։ Եապօնիայի մերձակայ վայրերում գտնվող իսլամ հոգևորականներ պատրաստվում են նոյնպէս գնալ ներկայ լինել ժողովին իսլամական կրօնի ճշմարտութիւնները տարածելու համար։

Չորս հինգ մեծ ընկերութիւնների նախագահութեան պաշտօնը վարող յայտնի Սըր Տօմսըն, մի քանի տարի առաջ իսլամութիւնն ընդունած լինելով կոչվում էր Աբդիւրրահման անունով։ Այդ անձը իսլամական կրօնի հարցերին կատարելապէս ծանօթ է։ Այդ անձը, Աբդիւրրահման էֆէնդին, Թողնելով նախագահութեան այլ և այլ պաշտօնները, չորս հինգ ամսից ի վեր ճանապարհորդել է Եապօնիայում։ Աբդիւրրահման էֆէնդին Եապօնիայի կրօնքների ընկերութեան կողմից հրաւիրվել էր։ Ջավայի մուֆթի սէյիդ Օսմանի և մի ուրիշ հոգևորականի ջանքով լոյս ընծայված մի գիրք Աբդիւրրահման էֆէնդիի կողմից անգլիերէնի Թարգմանվելով պիտի կարդացվի յիշեալ կոնգրէսում։ Եապօնացիները թէպէտ և հոգինը կուռքի ձևով են երևակայում, բայց հաւատում են թէ կայ միայն մի աստուած։ Այս տեսակէտից, ամբողջ Եապօնիայի իսլամական կրօնքն ընդունելը շատ հաւանական է երևում։

Իսկ «Իրշադը» «Նօվ. Վր.»-ից վերցնելով հաղորդում է.

Եապօնական կառավարութիւնը պաշտօնապէս դիմել է Սուլթանին և խնդրել, որ յունիսի մէկին Տօկիօյում կայանալիք «կրօնքների հետազօտութեան» ժողովին ներկայացուցիչներ ուղարկէ։ Այդ ժողովի նպատակն է եապօնացիների համար մի ճշմարիտ կրօն ընտրել և ընդունել։ Այդ ժողովի ներկայացուցիչներից մէկն էլ հինգ տարի առաջ իսլամական աստուածպաշտուկրօնով փառաւորված և Արդիւրրահման անունն ստացած անգլիացի յայտնի Տօմսըն փիլիսոփան է: Այդ անձը համիսլամութեան կուսակիցների առաջին պարագլուխներից մէկն է: Յիշեալը քանի տարուց ի վեր Հնդկաստանում, Հեռաւոր Արևելքում և այս վերջին ժամանակներս Եապօնիայում կատարեալ աջողութեամբ տարածում է իսլամական կրօնը:

Բօլգարիայում լոյս տեսնող «Ըխվէթ» թուրք լրագիրը՝ Րահիմ-Էդդին անունով մի անձի Հնդկաստանի թերթերում տպած մի յօդուածից քաղուածքներ մէջ բերելով՝ ասում է.

Յարգելի յօդուածագիրը մատնանիշ անելով եապօնացիների «խելքից մաքից դուրս զարգացումը», դրա առաջին պատճառն է համարում նրանց վարք ու բարքի մաքրութիւնը, համակրելիք ու համամիտ լինելը. ինչ որ, իսլամական աստուածայայտ կրօնի հիմքն է: Այժմ եապօնացիները իրանց կրօնքը փոխելով՝ կամենում են մի ուրիշ կրօնք ու օրէնք որդեգրել: Ինչպէս յայտնի է, նրանք ձեռնարկել են իսլամական կրօնին ծանօթանալ: Յարգելի Րահիմէդդինի կարծիքով «Հնդկաստանի մահմեդական հոգևորականների պարտականութիւնն է Ղուրանի պատուէրները անգլիերէնի թարգմանելով և մեկնաբանելով ուղարկել եապօնացիներին»: Րահիմէդդին էֆենդին այդ պարտականութիւնը ինք անձամբ ստանձնելով պատրաստում է մի անգլիերէն գիրք հրենակել: Հեղինակը յիշեալ գիրքը մի քանի մասերի է բաժանում: Նա խօսում է նախ՝ եապօնացիների արտակարգ առաջադիմութեան և քաղաքակրթութեան արժանացած լինելու մասին, նրանց կեանքի ու կենցաղավարութեան մասին: Յետոյ իսլամական կրօնի ինչից բաղկացած լինելու և իր աստիճան մարդկային կեանքի ու կենցաղավարութեան համաձայն ու յարմար լինելու մասին, ընդարձակօրէն: Յարգելի հեղինակը՝ այդ բարեգործական ձեռնարկի համար Աստուծուց աջողութիւն և իսլամ եղբայրներից բարեխօսական աղօթքներ հայցելով, նիւթական և բարոյական օգնութիւն է խնդրում: Ի հարկէ, ամեն մահմեդականի պարտականութիւնն է, իր կարողութեան չափով օգնութիւն և աջակցութիւն ցոյց տալ, որով իսլամական աստուածայայտ կրօնի՝ Եապօնիայի նման քաղաքակիրթ ու առաջացած երկրում ընդունվելուն և տարածվելուն օգնած կը լինի:

Մենք կանդրադառնանք այս խնդրին:

Զ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, 3 յունիսի

Լսում ենք, որ Պարսկ—Հնդկաստանի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը—որը այժմ Բերմանիստանի մայրաքաղաք Ռանգունում է գտնվում—Ջավայում և Սինգապուրում հանգանակել է Նոր-Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի անունով մօտ 20,000 ռուփի և 1000 ռուփի էլ տարեկան նպաստ նորահաստատ Արհեստագիտական դպրոցի համար: Հանգանակութիւնը դեռ շարունակվում է: Ջուղայի մի հարուստ վաճառական համաձայնել է Եւրոպայից պատվիրելու անհրաժեշտ մեքենաներ Արհեստ. դպրոցի համար: Սրբազանը նոյնպէս համոզել է Բատաւիայում գտնվող մի վաճառականի իր ամբողջ հարստութիւնը կտակելու ազգին: Լսում ենք, որ Կալկաթայի յայտնի «Աբգար և ընկերութիւն» վաճառատան ընկեր—կառավարիչ պ. Յարութիւն Աբգարեանը մտադիր է մի խոշոր գումար կտակել Նոր-Ջուղայի Արհեստագիտական դպրոցին: Պենանգի հայոց եկեղեցու 10,000 դօլար մայր գումարը, որը գրեթէ ւերացրել էր նոյն եկեղեցու երէցփոխը, առաջնորդին աջողվել է յետ ստանալ և ապահովացնել եկեղեցու անունով: Ահա հովուական այցելութեան օգուտները:

Ռանգունում սրբազան առաջնորդին սպասում է մի կնճռոտ խնդիր. ինչպէս լսում ենք, այժմեան եկեղեցու գետինը և շինութիւնը ուզում են գնել 300,000 ռուփով. ժողովրդի մեծ մասը, որը համաձայն էր վաճառվելուն (անշուշտ հոգևոր իշխանութեան թոյլտւութեամբ) մտադիր էր նոր կատարվելիք եկեղեցու շինութեան վրա ծախսել 200,000 ռուփի, իսկ մնացած 100,000 ռուփով հիմնել մի դպրոց, սակայն մի քանի խռովարար մարդիկ դիմում են կառավարութեան, այնպէս որ այս խնդիրը առկախ մնացել է և այժմ պէտք է վճռվի սրբազան առաջնորդի ներկայութեամբ:

Տեղիս մեր երկսեռ դպրոցների նորընտիր հոգաբարձութիւնը, ինչպէս լսում ենք, որոշել է հրաւիրելու մի ընտրանի տեսուչ. ճիշդ ասած մեր դպրոցները անցեալ քանի տարիները մի տեսակ «եօլա» են տարվել տեսչի բացակայութեան և բարեխիղճ ուսուցիչների պակասութեան պատճառով: Լսում ենք, որ Պետերբուրգի հայ եկեղեցիների խորհուրդը մտադիր է դադարեցնելու իր տարեկան 3000 րուբլու նպաստը մեր տեղիս դպրոցներին. եթէ ճիշդ է, սա մի մեծ հարուած կը լինի մեր դպրոցների համար, և հոգաբարձութեան կը դնէ մի անել դրութեան մէջ, որովհետև այս գումարը արդէն մտնում էր մեր դպրոցների նախահաշւի մէջ: Վստահ ենք, որ Պետերբուրգի խորհուրդը չի ցանկանայ զրկել մեր դպրոցներին և միջոց կը գտնի շարունակելու իր նպաստը, որով և ապահովված կը լինի մեր դպրոցների նիւթական աննախանձելի դրութիւնը:

Նոր-Ջուղայի «մեծ սրիկան» շարունակում է իր մատնութիւնները. այդ ողորմելի արարածը ամեն տեղ իր սուտ ու խարդախ նամակներով ողողելուց յետոյ, երբ տեսաւ, որ իր նպատակին չէ հասնում, սկսել է այժմ օտար դեսպանատներին դիմել. լսում ենք վերջերս մի ստայօդ գրութիւն է ուղղել Թէհրանի ռուսաց դեսպանատանը ընդդէմ մեր եռանդուն և անկեղծ գործոց փոխանորդ հօրը, բարդելով նրա վրա զանազան «մեղադրանքներ». թող լաւ իմանայ այդ Վասակը, որ իրան աւելի խոր տղմի մէջ խրելուց ուրիշ բան չի շահվիլ և ինչպէս միշտ այս անգամ էլ կը ստանայ իր արժանի պատասխանը:

Անցեալ շաբաթ օր տեղիս մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մի «դաշտային հանդէս» կենդրոնական դպրոցի բակում. ջանք չէր խնայվել խմբի կողմից հանդէսը աջող և զուարճալի դարձնելու համար, սակայն ինչպէս միշտ այս անգամ էլ «արիստոկրատ» դասակարգը փայլում էր իր բացակայութեամբ: Հանդէսը բաւական լաւ անցաւ, նորակազմ երաժշտական խումբը նուագում էր բաւական աջող կերպով:

Քանի ժամանակից ի վեր այստեղ կատարեալ սով է տիրում հացի պակասութեան պատճառով. հացը վաճառվում է 4—6 ղաշնով, իսկ ցորենը՝ խալվարը 20 թումանով. երևի մինչև նոր հունձի ձեռք գալը ժողովուրդը խիստ նեղութիւն կը կրի, իսկ նոր հունձը ասում են շատ լաւ է:

Նոր-Ջուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ

Բրիանի ճառը.—Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բրիանը, նախագահելով մի խնճոյքի, Դելկասէի նման արտասանեց քաղաքական մի կարևոր ճառ:

Բրիանը նախ սկսեց գովեստ կարդալով հանրապետական բլոկին, որը միացնում է բոլոր ռամկավարական ույժերին: Յետոյ խօսեց եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի մասին, որը գործն եղաւ յիշեալ բլոկին: Նոյն բլոկի գործն էին և պարլամենտական վերջին ընտրութիւնները, որոնք մի խոշոր յաղթանակ հանդիսացան ձախակողմեանների համար:

Բրիան իր ճառում ակնարկեց և այն փիլիսոփայական և սօցիալական մեծ վիճաբանութեան մասին, որ մղեցին միմեանց դէմ Ժօրէսն ու Կլեմանսօն: Վերջում նա բացատրեց իր ներկայութիւնը Սարիէն-Կլեմանսօ մինիստրութեան մէջ և ասաց. «Կառավարութեան ծոցում ես մնում եմ սօցիալիստ: Ես շատ լաւ եմ հասկանում, երբ իմ քաղաքական դաւանակիցներիցս ոմանք, կուռ հին ընկերներ, որոնց մասին չեմ կարող մտածել առանց յուզումի, առանց խանդաղատանքի, վրդովվում են և ինձ քննադատում: Ես ինքս, այն ծանրակշիռ հանգամանքներում, երբ ինձ առաջարկեցին իշխանութիւնը, անձկութեան և ցաւագին վարանման մի րօպէ անցկացրի: Ես ինձ հարց տուեցի, թէ ինչ պէտք էր անել: Եւ իջայ իմ գիտակցութեան խորքերը:

Ես կատարելապէս հասկացայ, երբ սօցիալիստական կազմակերպված կուսակցութեան կարևոր անձնաւորութիւնները յայտարարեցին, որ չեն կարող համերաշխ ու համամիտ լինել ինձ հետ: Նրանք արին այն, ինչ խորհուրդ էր տալիս իրանց կուսակցութեան ոգին, բայց, իմ կարծիքով, շատ կը սխալվէր սօցիալիզմը, եթէ ծանրակշիռ ժամերում պաշտպանէր իր դօգմայի, իր վարդապետութեան մէջ, էնտրանզիժան լինէր և մեկուսանար: Մեկուսացումը, անկարողութիւն է, մահ է: Ինչպէս անհատը նոյնպէս կուսակցութիւնը չէ կարող ապրել առանձնացման մէջ: Մեկուսացնող միջնորմներ չը կան ինչպէս կուսակցութիւնների, այնպէս այն անհատների միջև, որոնք ներկայացնում են այդ կուսակցութիւնները: Մանաւանդ հասարակական կեանքը ընդհանուր մտածումների և ջանքերի մի յարատև փոխանակութիւն է»:

«Սօցիալիստ» մինիստրը վերջացնում է իր խօսքը յայտարարելով, որ ինքը համոզված է, թէ ներկայ օրէնսդրութիւնը անխուսափելի կերպով պիտի միացնէ ձախակողմեան բոլոր բարեացակամ մարդկանց. «Նրանք կը քայլեն, ասաց, ձեռք ձեռքի տուած, առանց իրանց իդէալից ոչինչ կրճատելու, բայց լաւ գործ կատարելով Սօցիալական Հանրապետութեան աշխատանքի և ապագայի համար. (Բուռն ծափահարութիւններ: Աղաղակներ. կեցցէ Բրիան, կեցցէ Հանրապետութիւնը)»:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Կայզրը եւ ցարը.—Նորից յամառ լուրեր են պտտում, որ երկու կայսրները միմեանց հետ պիտի տեսակցեն մօտիկ ապագայում: Բեռլինում, կիսապաշտօնական շրջանակներում, պնդում են որ համարեա հաստատ է, որ Վիլհէլմ և Նիկօլա II-ը միմիանց հետ պիտի տեսակցեն: Այդ տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ հէնց որ կայսրը վերադառնայ Նորվեգիայի ափերից, ուր գնացել է այցելելու Հաակօն նորապսակ թագաւորին: Նա կը կատարվի, ինչպէս երկու վեհապետների միջև տեղի ունեցած վերջին տեսակցութիւնը, ծովի վրա, բայց գերմանական ջրերում, այսինքն Բալտիկեան ծովում և հաւանականաբար Դանցիգի մօտերում կամ ռուսական ափերին մօտիկ մի տեղում:

Մինչև վերջին րօպէն կամենում են գաղտնի պահել տեսակցութեան օրն և տեղը, ինչպէս այդ եղաւ նախորդ անգամ:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Նիստը բացվում է 11 ժամ 45 րօպէին: Նախագահում է իշխան Դոլգորուկով:

Պետրունկէվիչը յայտնում է, որ նախագահների մասնաժողովը խորհրդակցելով գտել է, որ Դումայի ընդհանուր ժողովներ նշանակելու համար գոյութիւն ունեցող կարգով—ժամանակ չը կայ աշխատելու, և առաջարկում է Դումայի ընդհանուր ժողովները բանալ ցերեկվայ ժամը 2-ին, քննել առանց ընդմիջումների մինչև երեկոյեան 7 ժամը, թողնելով հինգշաբթի և շաբաթ օրերը ագրարային մասնաժողովի տրամադրութեան տակ, իսկ մնացած օրերը—մինչև ժամը 2-ը և սկսեալ առաւօտեան ժամը 9-ից թողնել միւս մասնաժողովներին: Զեկուցանողի և Գոմարդեցի, Պոնիատովսկու և Կուզմին-Կարավայեվի մտքերի փոխանակութիւնից յետոյ—Դուման ընդունում է Պետրունկէվիչի առաջարկը, և անցնում է ժողովների համար օրինագծեր մշակող մասնաժողովի 11-անդամների ընտրութեան:

Խմբագրական մասնաժողովի առաջարկութեամբ բոլոր օրինագծերը մասնաժողովի կը յանձնվեն երկրորդ ընթերցումից յետոյ, իսկ երրորդ ընթերցման ժամանակ Դումային կը զեկուցվեն՝ վերջնականապէս հաստատելու համար: Դումա եկած Սիբիրի ներկայացուցիչները միջնորդում են—ագրարային մասնաժողովի թիւը աւելացնել և Սիբիրի անդամներով: Այդ առաջարկը յանձնվում է Նակազի հարցով զբաղվող մասնաժողովին: Տամբովի նահանգի ընտրութիւնները օրինաւոր ճանաչվելուց յետոյ,—Կօրսակովը 33-րդ մասնաժողովի կողմից զեկուցանում է 4 հարցապնդում՝ Պոլտավայի նահանգապետ Օգօբօղինիկօվի ապօրէն գործողութիւնների և, 10 հարցապնդում՝ աքսորների մասին, որոնց մէջ գործադուլի պատճառով արձակված երկաթուղային ծառայողների վերընդունելութեան հարցն է մտնում:

Ապա մի շարք հարցապնդումներ է լինում ձերբակալութիւնների մասին:

Խրիստօվսկին զեկուցանում է դատախազային հսկիչի ապօրէն գործողութիւնները՝ Ուլիանովի մնալու համար ներկայացրած գրութեան նկատմամբ: Բոլոր հարցապնդումներն էլ ընդունվում են:

Ընդմիջում է յայտարարվում ժամը 2 և 15 րօպէին: Նիստը վերսկսվում է 3 ժամ 15 րօպէին:

Պուստօշկինը օֆիցէրների պարժի հիման վրա գալիս է այն եզրակացութեան, որ արել են Շչեպկինը, Սկականցէվը և Եակօբսօնը. բարոն Րօօպը, թէևլով նոր փաստերի մի ընդարձակ շարք, գտնում է որ ջարդը նախօրօք յայտնի էր և նոյնիսկ նրա տևողութիւնը որոշած էր: Ջարդի պատճառները համարում է իսկական ռուսների, ոստիկանութեան և զօրքերի կազմակերպված գրգռումը և ատելութիւնը դէպի հրէութիւնը, ցոյց է տալիս, որ կենտրօնական իշխանութիւնները և բարձր պաշտօնեաները միշտ հակառակ են եղել ջարդերին. նրանց մեղքը կայանում է նրանում, որ իր ժամանակին համապատասխան հրամաններ չեն տալիս... բարձր և ստորին իշխանութիւնները բոլորովին առանձնակի են և կապ չունեն միմեանց հետ. միայն տեղական լայն ինքնավարութիւնը ապագայում ջարդերի առաջն կառնի (ծափահարութիւններ):

Վինավէրը պատասխանելով Րօօպին, ընդգծում է, որ յեղափոխական և անիշխանական կազմակերպութիւններն են որ յուզմունք են առաջացնում, և ոչ թէ յատուկ հրէական կազմակերպութիւնները. ապա մատնացոյց անելով այն զգաստութեան դժուարութեան վրա, որ մարդ կարող է ցոյց տալ իր մերձաւորների դիակները թաղցնելու գործում, անցնում է կառավարական՝ Բէլօստօկի ջարդի մասին տուած գրութեան մեկնելուն: Կառավարութիւնը, որ պաշտօնապէս ընդունում է որ ոստիկանութիւնը քայքայվել է նրանից, որ չէ կարող կռւել յեղափոխութեան հետ,—հէնց իրա համար մահվան դատավճիռ կարդաց: Բէլօստօկում ոչ թէ ջարդ տեղի ունեցաւ այլ ջարդի փորձ, ահաբեկելու յեղափոխականներին—խաղաղ բնակիչներին սպանելով... Հռետորը գտնում է, որ կենտրօնական իշխանութեան ներկայացուցիչները—Պլեվէի սպանութիւնից յետոյ, գտնվում են այնպիսի մի քայքայման մէջ, ինչպէս իշխանութեան ստորին գործակալները: Առաջ բերելով մի շարք օրինակներ, որ կառավարութիւնը շարունակում է դարձեալ իր մարդատեաց գործունէութիւնը յուդայական գրականութեան միջոցով—հռետոն ասում է, որ կառավարութիւնը հէնց ինքը տակից փորեց իշխանութեան այն սիւները, որոնց նա պէտք է որ պաշտպանէր: Այդօրինակ կառավարութեան ոչ թէ իշխանութիւն է հարկաւոր, այլ սպանիչների գումարդակներ: Կառավարչական կեղծ հաղորդագրութիւնները (որոնց հռետորը անանուն պասկվիլ է համարում ռուս ամբողջ ժողովրդի վերաբերմամբ), կառավարութիւնը հրէական երիտասարդութեան դարձնում է անիշխանականներ. բայց հրէաները կը կռւեն կառավարութեան այդօրինակ գործունէութեան դէմ, որով վերջին ժամանակներս վարակվել է և զօրքը,—իրանց միակ դաշնակցի հետ ձեռք ձեռքի տուած. այդ դաշնակիցը—համայն ռուս ժողովուրդն է (օվացիաներ):

Վինավէրից յետոյ խօսում է Րօդիչէվը Մի խանդավառ ճառով հռետորը յարձակվում է մինիստրութեան վրա, ցոյց տալով, որ նա ղեկավարվում է ստոր կեղծ և ստայօդ մտածութիւնների քաղաքականութեամբ, որ մոլորեցնում է զօրքին և նրա վարքը ապականում: Զինուորը ներքին կռւում իր կեանքը պէտք է զոհ բերէ՝ խնայելով թշնամուն: Դումայի բոլոր դիմումները մինիստրներին անօգուտ և իզուր անցան: Մի՞թէ նրանք չեն լսում—շարունակում է հռետորը—այն սոսկալի որոտումները, որ շուտով մի զարհուրելի շաչիւնով և հարուածով կիջնեն երկրի վրա և կը ջախջախեն նրան... եթէ այն ժամանակ պայթումից մինիստրները հեռանան, արդէն ուշ կը լինի... (բոլոր աթոռներում բուռն և բերկրալի ծափահարութիւններ):

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 յունիսի

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Անգլիական էսկադրան, բաղկացած զինուորական 97 նաւերից, յունիսի 10-ին կը հասնէ Լիբէկ:

ԶԵՄԼԵԱՆՍԿ, 26 յունիսի: Պերելէվկա գիւղում գիւղացիների ահագին ամբոխը ջարդուփշուր է արել պետական գինու պահեստը, կոտրել է կառավարչի պատուհանների ապակիները, հեռացրել է ստրաժնիկներին և ծառային: Եկած կօզակները և ստրաժնիկները անկարող են եղել դադարեցնել աւերմունքը և ձերբակալել գրգռիչներին և խռովարարներին: Կօզակների և գիւղացիների մէջ տեղի ունեցած հրացանաձգութեան ժամանակ սպանված և վիրաւորված են շատ մարդ:

ԿՕԶԼՕՎ, 26 յունիսի: «Козловская Жизнь» լրագրի խմբագիրը աքսորվում է Տամբովի նահանգի սահմաններից. այն տպարանը, որի մէջ տպվում էր յիշեալ լրագիրը, կնքված է:

ԲԷԼՕՍՏՕԿ, 26 յունիսի: Տեղս հասաւ արդարադատութեան մինիստրութեան պաշտօնեաներից Սիլինը՝ ջարդին վերաբերեալ նիւթեր ժողովելու համար:

ԳՐՕԴՆԱ, 26 յունիսի: Պրուժանսկի գաւառի ագրարային անկարգութիւնները, շնորհիւ ձեռք առած միջոցների—վերջացան:

ԴՈՒՐԲԱՆ, 26 յունիսի: Նատալում, Ումվոյի շրջակայքում զօրքերը շրջապատեցին տեղացիների զինուորական ույժը և լիակատար յաղթութիւն տարան: Տեղացիները զոհ տուին 547 սպանված, որոնց թւում և ապստամբութեան առաջնորդ Մաչվիլունը: Շատ քչերին աջողվեց փախչել: Անգլիացիները կորուստ չունեցան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Երէկ քաղաքի շատ տեղերում տեղի ունեցան քաղաքական ցոյցեր՝ կարմիր դրօշակներով և յեղափոխական երգեր երգելով: Հեծեալ պահակախմբերը չը ցրեցին ցուցարարներին: «Օլիմպիա» այգու մօտ միայն ընդհարում տեղի ունեցաւ կօզակների և ահագին ամբոխի միջև, որ բաղկացած էր առաւելապէս բանւորներից: Ամբոխի միջից ոստիկանութեան վրա քարեր նետվեցին, որին պատասխան հետևեց կօզակների կողմից երկու հասարակ համազարկ: Ընդհարման ժամանակ մի քանիսները վէրքեր ստացան:

ՍՕՖԻԱ, 26 յունիսի: Վառնա նահանգում ժողոված ամբոխը թոյլ չը տուեց եպիսկոպոս Նէօֆիտին ափ իջնել: Եպիսկոպոսը ճարահատեալ մեկնեց Կօնստանցա:

ՖՐՕԴՆԱ, 26 յունիսի: Բրեստլիտովսկում բոլոր տպարանների բանւորները գործադուլ են արել. պահանջն է—8 ժամվայ բանւորական օր:

27 յունիսի.

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 26 յունիսի: Երէկ, գեներալ-նահանգապետի տանը կայացաւ կօզակների և ինգուշների դատաւոր ներկայացուցիչների հաշտարար մասնաժողովի խորհրդակցութիւնը: Բոլորն էլ վկայելով, որ թշնամութիւն չը կայ և համաձայնութիւն կապելով՝ ցրվեցին հաստատ հաւատով, որ այսուհետև ընդհարում տեղի չի ունենայ:

ԲՈՐԴՕ, 26 յունիսի: Զինուորական մինիստր Էտիէնը իր ճառում ի միջի այլոց ասել է. «Բացի ներքին քաղաքականութիւնից, մենք պէտք է մտածենք և մեր արտաքին քաղաքականութեան և այն միջոցների մասին, որ կարելի լինի լօյեալ և յարգանաց յարաբերութիւններ պահպանել միւս պետութիւնների հետ: Զօրքը մեր արիւնիցն է, եթէ դէպի նա սիրով և վստահութեամբ վերաբերվենք, նա հարիւրապատիկ կը վարձատրէ սիրով, հաւատարմութեամբ և նուիրածութեամբ և կը պաշտպանէ մեզ մինչև վերջին շունչը: (Ծափահարութիւններ):

ԼՕՆԴՕՆ, 26 յունիսի: «Դէյլի Տելեգրաֆին» հաղորդում են Տօկիօյից, որ Կորէայի կայսրը հրամայել է բանտարկել Կանդակօին, որպէս վերջին դէպքերի գլխաւոր մեղաւորի: Մինիստրները կը մնան իրանց պաշտօններում: Մեծ յուզմունք և գրգռում է առաջ բերել Սէուլում՝ Եապօնայից վերջերս վերադարձած Վիվա պրինցի վարմունքը, որ հրաժարվել է ներկայանալ կայսրին պալատում: Լուրերին նայած, եապօնական գեներալ նախագահը մտադրվել է կայսրին զրկել իշխանութիւնից՝ յօգուտ Վիվայի: Միւս կողմից կայսրի և եապօնական ներկայացուցչութեան լարված յարաբերութիւնները, ըստ երևոյթին վերջացած պէտք է համարել: Իտօն կայսրից ընծաներ է ստացել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Պետերբուրգի գործակատարների բիւրօն որոշել է յուլիսի 2-ից առևտրի և արդիւնաբերութեան բոլոր մասերում մտցնել կիրակնօրեայ և տօնային անընդմիջում 24 ժամեայ հանգիստ:

ՑԱՐԵՎՕՌԱՆՉՈՒՐԿ, 26 յունիսի: Այստեղ անկարգութիւններ են: Կողոպտված և փչացած են զէմստվային կառավարիչների և մի կալուածքի կառավարչի ստացուածքները և եղած չեղածը: Ստրաժնիկների և խոպրավնիկի գալով կարգը վերականգնվեց:

ՄԻՏԱՎԱ: Բացվեց գիւղացիական բանկի բաժանմունքը:

ՎԻՇՆԻ-ՎՕԼՕՉԷԿ, 26 յունիսի: Երէկ սահմանադր. կուսակցութեան ժողովում Դումայի անդամ Մեդվէդեվը նկարագրեց Դումայի մինչ օրս ունեցած գործունէութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Պետական խորհրդական իշխ. Մասալսկուն Բարձրագոյն հրամայված է լինել երկրագործութեան վարչութեան վերատեսուչ:

ԿՐՕՆՇՏԱԴ, 26 յունիսի: Այսօր կայացաւ ծովային—զինուորական դատարանի վերջին նիստը՝ «Бѣдовой» ականանաւի անձնատուր լինելու գործի առիթով: Ծովապետ Րօժդէստվէնսկին իր վերջին խօսքերում կրկին իրան մեղաւոր ընդունեց և վերջացրեց այս խօսքերով. «Դիմում եմ ձեզ վերջին խնդիրքով. եթէ ձեզ համար թանգ է Նաւատորմղի ապագան, պատժեցէք միմիայն ինձ.» ժամը 12-ին դատաւորները առանձնացան դատավճիռը որոշելու համար:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 26 յունիսի: (Պաշտօնական թղթակցից): Յունիսի 22-ին Րուդչենկօվսկ ընկերութեան Ուսպէնսկու հանքի և Բօսսկի գործարանի բանւորները ժողովվեցին միտինգի, որ ղեկավարում էր բոլորին կողմնակի մի անձն: Չը նայելով ոստիկանութեան պահանջին, ամբոխը չը ցրվեց: Կանչվեցին դրագունները, որոնք ամբոխը շրջապատեցին ամեն կողմից: Հռետորը անձնատուր եղաւ, իսկ ամբոխը ցրվեց: Ապա բանւորները դիմեցին ֆրանսիական ընկերութեան հանքերը և հազարաւոր ամբոխ կազմելով—պահանջեցին ոստիկանութիւնից՝ արձակել հռետորին: Երբ ձերբակալվածին տանում էին Խզովկա, բանւորները աշխատեցին ազատել նրան, և սկսեցին քարեր նետել պահակների վրա: Ձերբակալվածին մի սխոռ մտցրին, սակայն ամբոխի սպառնալիքները շարունակվում էին: Ճարահատեալ Օֆիցէրը ազատեց բանտարկեալին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՒՈՐՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նովկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՑԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱՉԵՑԵԱՆՑ —1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈՒՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Գ ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ —6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտօպօլսկայա փողոց, 101, տելեֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկվում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից:
(չ.) 72—100

Հինգշաբթի, յունիսի 29-ին
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
բարեգործական նպատակով կը կայանայ
Դասախօսութիւն
ԲԺ. Ա. ԽԱՏԻՍԵԱՆԻ
ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին:
Մուտքը՝ վերնայարկում 20 կոպ., դահլիճում 50 կոպէկ:
(չ.հ.) 1—2

ՂԱՐԱՍՈՒԲԱԶԱՐԻ
հայոց ուսումնարանի համար ՀԱՐԿԱՒՈՐ է մի փորձառու ուսուցիչ, որ կարողանայ և եկեղեցու համար քառաձայն խումբ կազմել: Գերադասութիւնը տրվում է Ներսիսեանաւարտներին: Տարեկան 600 րուբլի ռոճիկ, բնակարան, վառելիք և ծառայ: Դիմել այս հասցէով՝ Карасубазаръ (Таврич. губ.) Попечительству Армянскаго училища.
(չ.) շ. 1 ան. 1—6

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36.
(կ.չ.ու.) 26—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ի. ԳՈՒՐԳԵՆՕՎ
Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինեկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆ. Տօլօչինովի), ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին: Ընդունելութիւնը ցերեկվայ 10—1 ժամը: Գօլովինսկի պր. տուն Մղիվանիի № 12: (կ.չ.ու.) 15—15

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 183—300

8 տարի ուսուցչութիւն և խմբապետութիւն արած
ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ
որոնում է նահանգական կամ գաւառական քաղաքներում ՏԵՂ: Համաձայն է դպրոցներում աւանդել դասեր, եկեղեցու համար ըստ Եկմալեանի ներդաշնակութեան քառաձայն խումբ կազմել: Բանակցել այս հասցէով՝ Карасубазаръ (таврич. губ.) Армянскому Священику Тер Гарегину Асрияацъ.
(ե. հ.) 5—6

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
(ամուսիններ, կամ քոյր և եղբայր): Ցանկացողները պէտք է դիմեն պայմանների մասին «Մշակի» խմբագրութեան, պ. Հ. Առաքելեա-
3—3

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Այս միջոցը մի քանի օրում
բոլորովին ոչնչացնում է

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:
10, 20, 30 8—40

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային ջրերում. Կիսլովոդսկ հիւրանոց Ռօսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ: Гостиница Россія № 14. 11—20

Մի երաժշտագէտ կարող է ուսուցիչ լինել և եկեղեցական խումբ կառավարել Ռուսաստանի հայոց որ և է դպրոցում: Դիմել՝ Էջմիածին Իսահակ վարդապետ Տ. Միքայէլեանի հասցէով: (ե.չ.) 2—4

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլավնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՕՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"
մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:
Ալէքսանդր Յարութինով
(հ. կ. ե.) 31—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլեամինօվսկայա փողոց № 8: (կ.ո.) 84—100

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
Ներսիսեանաւարտ փորձված ուսուցիչ և ձեռագործի և կար ու ձևի
ՎԱՐԺՈՒՀԻ
պաշտօն են որոնում:
Հասցէն՝ Верхніе-Акулисы, учителю, до востребованія. (ե.ու.) 2—2

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որը աւարտել է գիմնազիայի դասընթացքը և մի տարի պարապել է հայոց դպրոցում ռուսաց լեզուի և թուաբանութեան դասերով, ցանկանում է հայոց դպրոցներում ուսուցչական պաշտօն վարել:
Հասցէն՝ Дербентъ. С. И. Харазянцъ.
(ե.ու.կ.) 2—4

ԲԺԻՇԿ
Պ. Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վէլեամինօվսկայա փողոց № 22, Նաւտլուկովի տանը: (ե. հ. շ.) 6—15

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօդեզդ նոտար Մղեբրովի: (ե.հ.շ.) 21—100

1905 թ. ապրիլի 10-ին տաճկահպատակ, Բիթլիս քաղաքի բնակիչ, 20 տարեկան մի երիտասարդ, Բերոբ Սիմոնեան Սարոյեանցը դերձակ, Թիֆլիսից գնացել է Գանձակ—Բագու և մինչև օրս կորած է. նրա հայր Սիմոն Սարոյեանցը աղի արտասուքով խնդրում է պ.պ. ընթերցողներից հետամուտ լինել և որդու մասին մի տեղեկութիւն հաղորդել նամակով հետևեալ հասցէով՝ Թիֆլիս Սէրէբրենի փողոց, № 50, Ղազար Վարդանեանցին:
շ. կ. ե. հ. 4—4

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետևեալ գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՅՈՂԱԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷՉԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
Ի՛ՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
—
Եւ թարգմանած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ:
(շ. 1) (հ) 4—20

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր գիշ.
Կարս հասնելը.	4 » 23 » »			8 ժ. 43 ր. առ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5